Կարճ ասեմ. մենք թե՛ դրսից, եւ թե՛ ներսից քանդեցինք մեր երկիրը: Գլխավորապես մենք: Մենք եմ ասում, եւ սրա մեջն է ճշմարտությունը: Մի մասը խաչագող սրիկաներ, մի մասը գողեր ու ավազակներ, մի մասը ապիկար թշվառականներ, եւ չերեւաց մի բազմություն, գոնե մի խմբակ, որ վերածնվող երկրի շունչը ու բարոյական կարողությունը հայտնաբերեր:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ, 1921թ.

Երեքշաբթի
7 հուլիսի 2020թ.
№ 15 (531)

ՀԻՄՆԱԴՐԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Մենք պարտավոր ենք բժիշկներին մեր առանձնահատուկ երախտագիտությունը հայտնել

Հարգելի ընթերցող

Համաճարակի մեր օրերում բժիշկներն ամեն օր կատարում են պատկառանքի ու խոնարհումի արժանի աշխատանք:

Սյունիքի մարզում էլ բազմաթիվ բժիշկներ, բուժքույրեր, առողջապահական համակարգի այլ աշխատողներ համաճարակ կոչված համաշխարհային աղետի առաջնագծում են:

Հնարավոր չէ չնկատել այդ մարդկանց անմնացորդ նվիրվածությունն իրենց գործին:

Եվ անկարելի է չնկատել այն բժիշկներին ու բուժաշխատողներին, ովքեր ամիսներ շարունակ ոտքի վրա՝ առանց հանգստի, պայքարում են մարդկային կյանքեր փրկելու համար:

Հարգելի ընթերցող

Առաջարկում ենք syuniacyerkir.am խմբագրություն ներկայացնել հանրապետության, ինչպես նաեւ մեր մարզի այն բժիշկներին ու բուժաշխատողներին, ում կցանկանայիք երախտագիտություն հայտնել եւ գնահատանքի խոսք ուղղել՝ անձնուրաց աշխատանքի համար:

Նրանց լուսանկարները եւ ձեր հակիրճ խոսքը կարող եք ուղարկել խմբագրություն՝ syuniacyerkir@mail.ru հասցեով, որոնք մենք կհրապարակենք:

Անշուշտ, բժիշկների մերօրյա գործունեությունն արժանի է պետական մակարդակով արժեւորված գնահատանքի:

Կարծում ենք սակայն՝ դրվատանքի ավելի մեծ դրսեւորում, քան մարդկանց անկեղծ երախտագիտությունն է, չկա ու չի կարող լինել:

Սպասում ենք բժիշկ-նվիրյալների մասին ձեր խոսքին, նրանց լուսանկարներին (նշել, թե որ բուժհաստատությունում են աշխատում, ինչ մասնագիտություն ունեն կամ ինչ պաշտոն են զբաղեցնում):

//

Այս եղած-չեղած մեղաց աշխարհում,
Հնուց իր ուղին շեղած աշխարհում
Իմաստունների թիվն այնքան է շատ,
Որ իմաստնությունն էլ իմաստ չունի:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Հիպոկրատի երդմանը հավատարիմ

Մինչ քաղաքական դաշտում կրքեր են եռում, հանրապետությունում կորոնավիրուսով վարակվածների թիվը տագնապի լուրջ տեղիք է տալիս, իսկ բժիշկները շարունակում են հավատարիմ մնալ իրենց մասնագիտական պարտքին, այն է՝ կորոնավիրուսի ճիրաններից կյանքեր փրկել: Եվ պատահական չէ, որ աշխարհի տարբեր անկյուններում (իսկ կորոնավիրուսն իր շոշափուկներն է տարածել ամենուր), բժիշկներն անկեղծ հարգանքի եւ ծափահարությունների են արժանանում:

Կապանի բժշկական կենտրոնում կորոնավիրուսով վարակված հիվանդների ապաքինմանն է լծվել երիտասարդ բժշկուհի Սոնա Հակոբյանը: Գերազանցությամբ ավարտել է Կապանի թիվ 13 դպրոցը, ընդունվել Մ. Հերացու անվան համալսարանի բուժֆակը, այնուհետեւ մագիստրատուրան, Ա. Բաբլոյանի ղեկավարած հիվանդանոցում մասնագիտացել որպես մանկաբույժ, ապա բարձր առաջադիմությամբ ավարտել օրդինատուրան:

Բուժաշխատողի օրվա առթիվ ՀՀ առողջապահության նախարարի հրամանով անձնվեր ծառայության համար մի խումբ բուժաշխատողներ խրախուսվել են, նրանց թվում մանկաբույժ Սոնա Հակոբյանը:

Երիտասարդ, խոստումնալից կադրը կարող էր մնալ եւ շարունակել աշխատել նույն հիվանդանոցում, որպես մանկաբույժ: Սակայն հոր վախճանվելուց հետո վերադարձել է հայրենի քաղաք եւ արդեն մեկուկես տարի է, ինչ աշխատում է Կապանի բժշկական կենտրոնում՝ այն համոզումն ունենալով, որ յուրաքանչյուրը պարտավոր է զորավիգ լինել այն համայնքին, որտեղ ինքը ծնվել ու հասակ է առել:

Արդեն երկու ամիս է՝ երկու բուժքրոջ հետ պայքարում է Սյունիքի տարբեր բնակավայրերից բժշկական կենտրոն տեղափոխված՝ կորոնավիրուսով հիվանդ մարդկանց կյանքերի համար: Եվ եթե բուժքույրերը երկու շաբաթը մեկ փոխարինվում են, ապա ինքը շարունակում է համառորեն մնալ՝ հիվանդներին ոտքի

Շարունակությունը՝ էջ 3

Մեկնարկեց ամառային զորակոչը

Մինչ համավարակը հետին պլան է մղել բոլոր թեմաները, կյանքը շարունակվում է: Նաեւ եկել է հայոց զինված ուժերի ամառային թարմացման գործընթացը: Սյունիքում այն մեկնարկեց մարզկենտրոնից՝ հուլիսի 2-ին: Եվ ոչ թե այնպես, ինչպես ավանդաբար առաջին զորակոչը տեղի է ունենում Գարեգին Նժդեհի հուշահամալիրից, այլ զինկոմիսարիատի առջեւի պուրակից: Այս դեպքում էլ կորոնավիրուսի համավարակը ճշտումներ է մտցրել: Իսկ զինակոչիկներին առաջին բարեմաղթանքները հղեց Սյունիքի զորակոչային եւ զորահավաքային ստորաբաժանման ղեկավար, փոխգնդապետ Արմեն Հովսեփյանը:

Փոխգնդապետը մարտի վերջից է ղեկավարում կառույցը, որ այժմ զինկոմիսարիատի փոխարեն կոչվում է Սյունիքի զորակոչային եւ զորահավաքային տարածքային ստորաբաժանում: Ասում է, որ տասներեք տարեկանից ծանոթ է զինվորական համազգեստին: Յոթերորդ դասարանից հետո սովորել է Սուվորովի անվան բազմաբնույթ զինվորական ուսումնարանում (այժմ՝ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմական վարժարան), կրթօջախի առաջին շրջանավարտներից է: Այնուհետեւ մեկնել է պարտադիր զինվորական ծառայության. դա 1996-ի դեկտեմբերին էր, մի քանի ամիս ծառայելուց հետո ընդունվել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ: Բուհն ավարտելուց հետո 11

Շարունակությունը՝ էջ 3

Սուրեն Պապիկյանը եւ Հունան Պողոսյանը հետեւել են Քաջարան-Մեղրի ճանապարհի հիմնանորոգման ընթացքին

ՏԿԵ նախարար Սուրեն Պապիկյանը մարզպետ Հունան Պողոսյանի ուղեկցությամբ հետեւել է Քաջարան-Մեղրի 10 կմ երկարությամբ ճանապարհի հիմնանորոգման ընթացքին: Նշված ճանապարհահատվածը վերջին անգամ նորոգվել էր 1990-ականների վերջերին:

Ներկայումս այստեղ իրականացվում են հողային աշխատանքներ: Շինարարության պատասխանատու Ազատ Գասպարյանի հետ զրույցում նախարարը կարեւորել է ջրահեռացման եւ ջրամեկուսացման համակարգի ուղղությամբ առանձնահատուկ ուշադիր աշխատանքը՝ ծածկի հետ կապված հետագա բարդություններից խուսափելու համար: Կապալառու ընկերության աշխատակիցները նախարարին զեկուցել են, որ տվյալ ճանապարհահատվածում ասֆալտապատման աշխատանքների մեկնարկը նախատեսվում է հուլիսի կեսերին:

Նշենք, որ ճանապարհահատվածի հիմնանորոգման պայմանագրային արժեքն է 1 մլրդ 12 մլն դրամ: //

Կառավարությունը հաստատեց աշնանացան ցորենի արտադրության խթանման աջակցության ծրագիրը

Նախագծով առաջարկվում է Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի, Լոռու, Արագածոտնի, Տավուշի եւ Կոտայքի մարզերում 2-20 հա մակերեսով ցորենի ցանքատարածություններ մշակող գյուղացիական տնտեսություններին վաճառվող, ինչպես նաեւ ցանք կատարելու համար արտադրված եւ/կամ ներմուծված աշնանացան ցորենի էլիտա եւ/կամ 1-ին վերարտադրության հավաստագրված սերմերի գնի մասնակի սուբսիդավորում կամ փոխհատուցում:

«Սուբսիդավորման փոխհատուցման գործընթացը կիրականացնի նախարարությունը: 1 կգ-ի համար տրվող սուբսիդիայի կամ փոխհատուցման գումարը սահմանվում է 70 դրամ, ինչը հնարավորություն կտա տնտեսավարողներին ձեռք բերել որակյալ սերմեր՝ շուկայական գնից առավել ցածր գնով», – ասաց Էկոնոմիկայի նախարար Տիգրան Խաչատրյանը:

Նախագծի ընդունումը կնպաստի հանրապետությունում ցորենի բերքատվության մակարդակի բարձրացմանը՝ շուրջ 30%-ով:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշեց, որ թեեւ ունենք ջրի, սերմացուի, ճանապարհի, պարարտանյութի խնդիրներ, բայց եթե այդ օրակարգի հարցերը լուծվեն, որոնք ժամանակի ընթացքում կլուծվեն, միեւնույնն է՝ գյուղատնտեսությամբ զբաղվող մարդկանց բարեկեցության մակարդակը չի փոխվելու, քանի չունենք բովանդակային փոփոխություն, քանի դեռ չենք փոխել լավ ու վատ այգու, տնտեսության մասին մեր պատկերացումները, քանի դեռ գյուղատնտեսության աշխատանքները չեն պլանավորվում թուղթ ու գրիչով, եւ ավելի լավ է՝ համակարգչով: *«Սա ոչ թե այն ծրագրերից է, որ դիզվառելիք ենք տալիս, որի կեսը գնում չգիտենք ինչ է լինում, այլ մենք աջակցում ենք արդյունավետության բարձրացմանը, քանի որ ֆիզիկական աջակցությունը ոչ մի բանի չի բերում, պետք է լինի բովանդակային աջակցություն»,* – ընդգծեց վարչապետը:

ARMENPRESS.AM

Կապանում նախատեսվում է իրականացնել Շահումյան փողոցի մայթերի բարեկարգման աշխատանքներ

Հարգելի՝ համաքաղաքացիներ

Տեղեկացնում ենք Ձեզ, որ համայնքների տնտեսական եւ սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերի շրջանակում Կապան համայնքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Շահումյան փողոցի մայթերի վերանորոգման, ծառատնկման, կանաչապատ տարածքների վերականգնման եւ բարեկարգման աշխատանքներ: Ծրագիրն իր մեջ ներառում է նաեւ 161 հատ ծառի հատում, արմատների հանում, այդ թվում՝ 99 հատ՝ մինչեւ 160 մմ տրամագծով ծառ, 25 հատ՝ 160-250 մմ տրամագծով ծառ, 14 հատ՝ 240-320 մմ տրամագծով ծառ եւ 23 հատ՝ 320 մմ եւ ավելի տրամագիծ ունեցող ծառ: Կհատվեն եւ արմատներով կհանվեն այն ծառերը, որոնք վնասում են մայթի եւ ճանապարհի ծածկը, վտանգ են ներկայացնում բնակիչների եւ շենք-շինությունների համար, ինչպես նաեւ այն ծառերը, որոնք ալերգիկ հատկություններ ունեն: Հատված եւ արմատներով հանված 161 հատ ծառի փոխարեն կտնկվի 475 հատ՝ 1 մետր բարձրություն ունեցող պենսիլվանյան /գանգրասաղարթ/ հացենու տնկիներ, որոնք գեղեցիկ են կանաչապատման համար, ժամանակին էտման դեպքում՝ հսկա չափերի չեն հասնում, արմատային համակարգը ուղղաձիգ է՝ մայթին եւ ճանապարհին վնաս չեն հասցնում, ալերգիկ ռեակցիաներ չեն առաջացնում:

Աշխատանքների ընթացքում առաջացած փայտանյութը կբաշխվի սոցիալապես անապահով բնակիչներին եւ վառելափայտ օգտագործող համայնքային կառույցներին:

Աշխատանքներում հնարավորինս կներգրավվեն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ՊՈԱԿ-ները եւ ստորաբաժանումները:

Հաշվի առնելով նախատեսվող աշխատանքների կարեւորությունը բնապահպանական տեսանկյունից, առաջարկում ենք մինչեւ 2020 թվականի հուլիսի 15-ը՝ ժամը 18:00, Կապանի համայնքապետարան ներկայացնել Ձեր առաջարկությունները, դիտողությունները եւ մտահոգությունները՝ կապված ծառահատման եւ նոր ծառերի տնկման աշխատանքների հետ: Առաջարկությունները, մտահոգությունները եւ դիտողությունները կարող եք ներկայացնել՝ այցելելով Կապանի համայնքապետարան, Ա. Մանուկյան 5ա հասցեով կամ դրանք ուղարկելով kapanmayor@gmail.com էլեկտրոնային փոստին: Լրացուցիչ հարցերի դեպքում կարող եք դիմել Կապանի համայնքապետարանի քաղաքաշինության եւ կոմունալ տնտեսության բաժին, հեռախոս

0285 40479: Պատասխանը Ձեզ կուղարկվի էլեկտրոնային փոստով կամ դիմումում նշված՝ բնակության վայրի հասցեով:

COVID 19 վիրուսի տարածման վտանգի կանխարգելման նպատակով արտակարգ իրավիճակով պայմանավորված, համայնքապետարանում քննարկում չի կազմակերպվի:

Միասին գեղեցկացնենք մեր համայնքը:

ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Կապանում այս տարի կիրականացվի ավելի քան 2 մլրդ դրամի սուբվենցիոն ծրագիր

Հունիսի 30-ին տեղի ունեցավ Կապանի ավագանու արտահերթ նիստը: Օրակարգում ընդգրկված էր 25 հարց:

Ավագանու հաստատմանը ներկայացվեց Կապան համայնքի 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 129-Ն որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագիծը, որը պայմանավորված էր սուբվենցիոն ծրագրերի հաստատմամբ: Ըստ այդմ՝ համայնքի բյուջեում նախատեսվում է եկամուտների եւ ծախսերի ավելացում 1 մլրդ 217 մլն 996 հազար ՀՀ դրամի չափով:

Ավագանին հաստատեց նաեւ համայնքային գույքագրման փաստաթղթերում լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծը, որտեղ ներառվեցին նաեւ «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր - Հայաստան» ծրագրի կողմից նվիրաբերված աղբատար մեքենան եւ աղբամանները, որոնք անհատույց օգտագործման հանձնվեցին «Կապանի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ին՝ նպատակային օգտագործման համար:

ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2020թ.-ին Սյունիքում հաստատվել է 27 սուբվենցիոն ծրագիր, ընդհանուր արժեքը՝ 8,545 միլիարդ դրամ

2020թ. Սյունիքում հաստատվել է 27 սուբվենցիոն ծրագիր, ընդհանուր արժեքը՝ 8,545 միլիարդ դրամ, որից համայնքի ներդրումը կազմում է 1,865 մլրդ դրամ, պետության համաֆինանսավորումը՝ 5,386 մլրդ դրամ, այլ ներդրողներինը՝ 1,294 մլրդ դրամ, մասնավորապես Քաջարան համայնքի բազմաբնակարան շենքերի էներգարդյունավետության ծրագրով ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը կներդնի մոտ 657 մլն դրամ:

Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է Սյունիքի փախմարզպետ Նարեկ Բաբայանը:

Սուբվենցիայի ծավալները 2019թ. համեմատ 2020թ. աճել են 3,4 անգամ (2019-ին 2018-ի համեմատ՝ 5.3 անգամ), համայնքների ներդրման աճը՝ 1,2 անգամ: Այս ցուցանիշներով հանրապետությունում առաջատարը Սյունիքի մարզն է:

2020թ. սուբվենցիոն ծրագրերի արժեքն ըստ համայնքների՝

- Կապան ..... 2,105 մլրդ դրամ,
- Գորիս ..... 307 մլն դրամ,
- Սիսիան ..... 1,552 մլրդ դրամ,
- Մեղրի ..... 394 մլն դրամ,
- Քաջարան ..... 3,851 մլրդ դրամ,
- Տաթեւ ..... 27 մլն դրամ,
- Գորայք ..... 309 մլն դրամ:

2020թ. սուբվենցիոն ծրագրերի ուղղությունները՝

- բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում – 3.516 մլրդ դրամ,
- բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում, ասֆալտապատում – 2.837 մլրդ դրամ,
- մանկապարտեզների կառուցում, վերակառուցում /նորոգում - 573 մլն դրամ,
- խմելու ջրամատակարարման, ինչպես նաեւ ջրահեռացման համակարգերի կառուցում /նորոգում - 475 մլն դրամ,
- հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ եւ այլն) կառուցում /վերանորոգում– 535 մլն դրամ,
- փողոցային լուսավորության համակարգերի կառուցում /նորոգում – 181 մլն դրամ,
- վերականգնվող էներգետիկա, այդ թվում՝ արեւային ֆոտովոլտային կայանների տեղադրում – 11 մլն դրամ,
- այգիների, պուրակների կառուցում/բարեկարգում – 314 մլն դրամ,
- մեքենասարքավորումների ձեռքբերում -103 մլն. դրամ:

//

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ. «Գազի սակագինը բնակչության համար կմնա անփոփոխ»

Զրույց «Գազպրոմ-Արմենիա» ՓԲ ընկերության Սյունիքի գազիֆիկացման եւ գազամատակարարման մասնաճյուղի տնօրեն Վահե Հակոբյանի հետ

– Պարոն Հակոբյան, բնական գազի սակագնի փոփոխության խնդրին վերջին մեկ-երկու տարում զանգվածային լրատվամիջոցները ժամանակ առ ժամանակ անդրադառնում են: Եվ ահա հունիսի 19-ին ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նիստում քննարկվել է «Գազպրոմ-Արմենիա» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագնի եւ խնդրո առարկային վերաբերող այլ հարցեր: Կխնդրեինք ներկայացնել փոփոխությունները:

– Նախ ներկայացնեմ նախապատմությունը. «Գազպրոմ-Արմենիան» բնական գազի սակագնի փոփոխության հայտ է ներկայացրել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով: Վերջինս ուսումնասիրությունից հետո առաջարկել է սակագնային իր տարբերակը, այսինքն՝ «Գազպրոմ-Արմենիա» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող բնական գազի համար սահմանել է հետեւյալ սակագները: Ասեմ, որ անփոփոխ է մնացել սոցիալապես անապահով ընտանիքների սպառողներին վաճառվող բնական գազի սակագինը, այն է՝ մինչեւ 600 խմ գազի համար մեկ խորանարդը՝ 100 դրամ, իսկ 600 խմ գերազանցող բնական գազի համար՝ 139 դրամ (1 խմ):

Փոփոխությունը կատարվել է 10 հազար խմ-ից բարձր սպառողների մոտ եւ գյուղմթերք արտադրողների ու գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող, վերամշակող՝ պահածոների, խմիչքների եւ կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող անձանց համար, որոնց մատակարարվող բնական գազի սակագինը 224,1 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ է՝ սպառված յուրաքանչյուր 1000 խմ բնական գազի համար: Իսկ արտադրական մյուս ձեռնարկությունների համար (գազալցակայաններ եւ այլն), որոնք 10 հազար խմ-ից ավելի գազ են սպառում, սպառված յուրաքանչյուր հազար խմ բնական գազի համար սակագին է սահմանված 255,91 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (նախկինում 242,91 ԱՄՆ դոլար էր):

– Եվ ե՞րբ ուժի մեջ կմտնեն փոփոխությունները:

– Սահմանված սակագներն ուժի մեջ կմտնեն 2020 թվականի հուլիսի 19-ից, բացառությամբ ջերմային էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձանց վաճառվող բնական գազի սակագների, որոնք ուժի մեջ կմտնեն 2020 թվականի օգոստոսի 1-ից:

– Պարոն Հակոբյան, մեր վերջին զրույցը կայացել է վեց ամիս առաջ՝ նախորդ տարվա դեկտեմբերին, այս ընթացքում շատ բան փոխվեց, մանավանդ կորոնավիրուսի համավարակի հետ կապված: Կուզեինք իմանալ, թե Ձեր ղեկավարած կառույցն ինչպե՞ս է աշխատել արտակարգ դրության պայմաններում:

– Ասեմ, որ մասնաճյուղն ապահովված է անհրաժեշտ կադրերով, աղոթում եմ, որ վարակը հեռու լինի ոչ միայն մեր աշխատակիցներից: Տրամաբանական չէր լինի եւ անհրական, որ ասեմ՝ ստեղծված ծանր վիճակը շրջանցել է մեր կառույցը: Տասնհինգ օր դադարեցրել ենք գազիֆիկացման վերաբերյալ դիմում-հայտերի ընդունումը, ոչ էլ մի մարդ է մտել հիմնարկ, փակ, կարանտինային վիճակ էր: Աշխատակիցներն աշխատում էին հեռավար սկզբունքով: Հետո արդեն դիմակներով, ձեռնոցներով գործն աստիճանաբար հունի մեջ մտավ, չէի ասի՝ թե նախկին ծավալներով: Այն աշխատասենյակում, որտեղ 4-5 աշխատակից էր նստում, հիմա երկու հոգի են, մարդիկ խստորեն հետեւում են սանիտարահիգիենիկ կանոններին:

– Ստիպված ենք այս անգամ եւս հարց ուղղել Մեղրի համայնքի գազիֆիկացման առնչությամբ: Դարձյալ մեր նախորդ զրույցին պիտի հղում անեմ, որի ժամանակ նշել էիք, որ համայնքի այն շենքերում, որոնք գազիֆիկացվել են, դեֆլեկտորները բացակայում են, ինչը լուրջ խնդիր է գազից օգտվելու անվտանգության առումով::

– Նույն խնդիրը (խմբ.-դեֆլեկտորներ) մնում է: Դրա եւ ծխատարների վերաբերյալ զրույց ենք ունեցել սպառողների հետ, եկել ենք համաձայնության, որ համայնքապետարանն էլ աջակցի խնդրի լուծմանը, բայց առայժմ ոչ մի արձագանք չկա:

– Կխնդրեինք նշել, թե առաջիկայում համեմատաբար խոշոր հիմնարկ-ձեռնարկություններից որոնք պիտի գազիֆիկացվեն, իսկ դրանից առաջ, թե վերջին վեց ամսվա կտրվածքով գազիֆիկացման քանի՞ դիմում-հայտ է ներկայացվել:

– Վեց ամսվա կտրվածքով 65 դիմում է եղել, դրանց վերաբերյալ կազմվել է նույնքան նախագիծ, շինմոնտաժային աշխատանքներից կատարվել է 57-ը, եւս 15 նախագիծ ընթացքի մեջ է (սա բնակչությանը մատակարարվող) գազի վերաբերյալ:

Ինչ վերաբերվում է այլ շինմոնտաժային աշխատանքներին *(մեր փաստաթղթերում այդպես է ձեւակերպվում)* Կապանի համայնքապետարանը դիմում է ներկայացրել գազիֆիկացնելու Կապանի ժամանակակից արվեստի թանգարանը, Կապանի թիվ 2 երաժշտական դպրոցը, քաղաքացիական կացության ակտերի գրանցման Կապանի տարածքային բաժինը (ՀԱԳՍ), ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժինը: Սրան հավելած՝ հացաթխման երկու արտադրամաս է ցանկանում օգտվել բնական գազից: Նաեւ չմոռանամ. գազիֆիկացման դիմում է ներկայացրել «Ապառաժ» ՍՊ ընկերությունը: Գազիֆիկացման պահանջարկ կա այն գյուղերի բնակիչներից, որոնք նախկինում գազիֆիկացված էին, ինչպես նաեւ Կապան քաղաքի տարբեր թաղամասերից (Ձորք, Բաղաբերդ, Դավիթ Բեկ):

> ***...Անփոփոխ է մնացել սոցիալապես անապահով ընտանիքների սպառողներին վաճառվող բնական գազի սակագինը, այն է՝ մինչեւ 600 խմ գազի համար մեկ խորանարդը՝ 100 դրամ, իսկ 600 խմ գերազանցող բնական գազի համար՝ 139 դրամ (1 խմ):***

ԶՐՈՒՅՑԸ՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Հիպոկրատի երդմանը հավատարիմ

Սկիզբը՝ էջ 1

հանելու համար՝ հավատարիմ մնալով բժշկի իր կոչմանը:

Ապաքինված հիվանդներից Մելանյա Բալայանը գրում է. *«Շնորհավորում եմ Սոնային՝ իր գործի նվիրյալին ու գիտակին, փխրուն, նրբակազմ աղջիկն իր ուսերին է վերցրել անսահման ծանր բեռ՝ գիշեր-ցերեկ ոտքի վրա մնալով բուժում, հոգատար վերաբերմունք ցույց տալիս, ոգեւորում ու հավատով լցնում հիվանդների, ինչ-որ տեղ էլ հուսահատվածների հոգիները: Քանի անգամ եմ ասել՝ Սոն ջան, ուզում եմ գրկել, համբուրել քեզ, իմ աղջիկ, դու ինձ երկրորդ կյանք պարգեւեցիր, խինդ ու ջերմություն պարգեւեցիր: Շնորհակալ եմ քո մարդկային կերպարի համար, թող Աստծո շռայլ օրհնանքները թափվեն քո ու քեզ ծնող, լույս աշխարհ բերող մարդկանց վրա»:*

Ուրախալին այն է, որ երիտասարդ բժշկուհու նվիրվածությունն աննկատ չի մնացել: Բուժաշխատողի օրվա առթիվ ՀՀ առողջապահության նախարարի հրամանով նոր կորոնավիրուսային հիվանդության դեմ պայքարում եւ արտակարգ իրավիճակում դրսեւորած անձնվեր ծառայության համար մի խումբ բուժաշխատողներ խրախուսվել են, նրանց թվում՝ մանկաբույժ Սոնա Հակոբյանը, ով պարգեւատրվել է ՀՀ առողջապահության նախարարության հուշամեդալով:

Այս առիթով եւս եղան բազմաթիվ երախտագիտության խոսքեր եւ սրտաբուխ շնորհավորանքներ՝ ուղղված երիտասարդ բժշկուհուն:

Վերջում նշենք, որ Սոնա Հակոբյանը դուստրն է մեր թերթի բարեկամ Մարի Առաքելյանի, ում բանաստեղծությունները քանիցս հրապարակվել են «Սյունյաց երկրի» էջերում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մեկնարկեց ամառային զորակոչը

Սկիզբը՝ էջ 1

տարի ծառայել է ՀՀ զինված ուժերում, այնուհետեւ եղել Գավառի, Վայքի զինվորական կոմիսար: Ի դեպ, ՀՀ զինված ուժերում ծառայելու ժամանակ մարտական առաջադրանք կատարելիս ծանր վիրավորվել է: Նաեւ արագացված ռազմական դասընթացների է մասնակցել Հունաստանում եւ Ռուսաստանի Դաշնության Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում:

Ա. Հովսեփյանը կարծիք հայտնեց, թե լավ օրից չէ, որ նման պայմաններում են երիտասարդներին բանակ ճանապարհում (առանց տոնախմբության), բայց համավարակն իր երկաթյա ճշտումներն է մտցրել: *«Յուրաքանչյուր հայ ընտանիքի համար ունենալ առողջ զավակ եւ բանակ ճանապարհել երաժշտությամբ ու քեֆ-ուրախությամբ, երեւի իրադարձություն է ողջ կյանքում հիշելու համար, բայց նախարարի հրամանով բացառված են բոլոր տեսակի միջոցառումները, հանրահավաքները: Փառք Աստծո, կորոնավիրուսից բանակը զերծ է մնացել, եւ կարծում եմ՝ ամեն ինչ արվում է, որ վիրուսն այս զորակոչի հետ չթափանցի բանակ»:*

Ի դեպ, այս զորակոչին նորամուծություն եւս եղավ, հուլիսի 3-ին անձը հաստատող փաստաթղթով զինակոչիկի ծնողներից մեկը Կապանի զորահավաքային եւ զինակոչային տարածքային ստորաբաժնում հաղորդակից եղավ կենտրոնական հավաքակայանում տեղի ունեցող վիճակահանությանը, որի միջոցով պարզվեց, թե որտեղ է իրենց որդին անցկացնելու զինվորական ծառայությունը, որ զորամասում:

Հաջորդ զորակոչը հուլիսի 12-ին է՝ Գորիսում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

«Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր պ-ն Ս. Ալեքսանյանին

Հարգելի Սամվել Լազրի

«Սյունյաց երկիր» թերթի նախաձեռնությունը՝Սյունիքի բոլոր ժամանակների սրբավայրերը գտնելու, տեղորոշելու, անցյալի մոռացված փշուրներն ուխտագնացությամբ ժողովելու, տեղագրություն ստեղծելու առաքելությունը հրաշալի արդյունք է տվել: Այդ լրագրողական արշավի մասը ներկայացնող Գորիսի տարածաշրջանի սրբավայրերին նվիրված

թերթի հատուկ թողարկումը (30.04.2020) աչքի է ընկնում ինչպես նոր նյութերի ու մեկնաբանությունների թարմությամբ, կատարման հիմնայնությամբ, ազգագրական ու հայրենագիտական հարուստ փաստագրությամբ, այնպես էլ՝ պատմական աղբյուրներում առկա մեկնություններից գլխավորի ու բնութագրականի զուգորդմամբ: Կարեւոր եմ համարում, որ թերթը հեռու է մնացել մի շարք կնճռոտ հարցերի շուրջ ընթերցողին կարծիքներ «պարտադրելու» մոտեցումներից:

Հատուկ թողարկման ներկա համարը՝ Ձեր ղեկավարությամբ, թերթի ողջ կոլեկտիվի նոր ձեռքբերումն ու հաղթանակն է, որի համար շնորհավորում ու ջերմ բարեմաղթանքներ եմ հղում: Նույնպիսի պատվախնդրություն եւ մանրակրկիտ ուսումնասիրություն եմ ակնկալում նաեւ Սյունիքի մյուս տարածքների սրբավայրերը ներկայացնող թողարկումներում:

Ամենայն բարիք եւ հաջողություններ, ստեղծագործական նորանոր ձեռքբերումներ ձեր ստեղծարար խմբագրակազմին:

ԳԱԳԻԿ ՀԱՅՐՈՒՄՅԱՆ

Իրեն ազգային ջոջ երեւակայող այս տղան հիմա մի ճանապարհ ունի՝ Աստծուց ներում հայցել սյունիքյան մեղքերի համար, քանզի վերջին դատաստանն անխուսափելի է

«Սյունյաց երկրի» դեմ 2018 թ. հունիսին հայտարարված եւ մինչեւ օրս շարունակվող դատական արշավում առանցքային դեր էր ստանձնել Սյունիքի երբեմնի մարզպետ Վահե Ա. Հակոբյանը:

Ընդդեմ Սամվել Ալեքսանյանի եւ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ-ի (որ հիմնադիրն է «Սյունյաց երկիր» թերթի ու Syuniacyerkir.am կայքի) դատական վեց հայց էր ներկայացրել՝ պահանջելով ոչ միայն ոչ նյութական փոխհատուցում, այլեւ մի քանի միլիոն դրամի փոխհատուցում՝ մեր հրապարակումներից կրած վնասի համար:

Սակայն հայցվոր Վահեն բոլոր գործերով, առանց բացառության, խայտառակ պարտություն է կրել:

Վերջին պարտությունն արձանագրվեց 2020 թ. ապրիլի 22-ին Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանում (որոշումը նոր-նոր ենք ստացել):

Դատական վեց գործից յուրաքանչյուրը խոսակցության առանձին եւ հետաքրքիր նյութ է, բայց մենք, ժամանակի սղության պատճառով, դրանց հանգամանալից անդրադառնալ չենք կարող:

Բավարարվենք միայն դատական գործերի համարները նշելով, որը կարտացոլի Վահեի դատական անընդմեջ պարտությունների շքերթը, եւ հնարավորություն կտա ընթերցողին (ցանկության դեպքում) «Դատալեքս» տեղեկատվական համակարգում առավել մանրամասն ծանոթանալ դրանցից ամեն մեկին:

Ստորեւ՝ համառոտ տեղեկանք Վահե Հակոբյանի վեց հայցադիմումի անփառունակ ավարտի մասին:

1. Թիվ ԵԿԴ/3404/02/17 քաղաքացիական գործով Վահեն պարտություն է կրել եւ առաջին ատյանում, եւ Վերաքննիչում: Գնացել է Վճռաբեկ, որտեղ էլ բողոքը չեն ընդունել: *Գործով պատասխանող էր նաեւ «Սյունյաց աշխարհ» ՍՊ ընկերությունը (տնօրեն՝ Սամվել Ալեքսանյան):*
2. Թիվ ՍԴ2/0386/02/17 քաղաքացիական գործով հաջողության ոչ մի նշույլ, թեեւ դատավարությունը սկսել է երեք տարի առաջ, գործը մինչեւ հիմա գտնվում է նախաքննության փուլում: *Գործով պատասխանող է նաեւ «Սյունյաց աշխարհ» ՍՊ ընկերությունը:*
3. Թիվ ԵԴ/6718/02/19 քաղաքացիական գործ, պատասխանողներից մեկը դարձյալ «Սյունյաց աշխարհ» ՍՊ ընկերությունն է: *Հայցադիմումը վերադարձվել է հայցվորին, ով էլ վերաքննիչ բողոք է ներկայացրել ու նորից մերժում ստացել:*
4. Թիվ ԵԴ/3676/02/19 քաղաքացիական գործ, պատասխանողներից մեկը կրկին «Սյունյաց աշխարհ» ՍՊ ընկերությունն է: *Հայցադիմումը վերադարձվել է հայցվորին:*
5. Թիվ ԵԴ/1003/02/19 քաղաքացիական գործ, պատասխանողներից մեկը նորից «Սյունյաց աշխարհ» ՍՊ ընկերությունն է: *Հայցադիմումը վերադարձվել է հայցվորին:*
6. Թիվ ԵԴ/16392/02/18 քաղաքացիական գործ, հայցվոր՝ Վահե, պատասխանող Սամվել Ալեքսանյան եւ «Նոյյան տապան»:

Երեւան քաղաքի առաջին ատյանի դատարանը 2019 թ. սեպտեմբերի 6-ին մասնակիորեն բավարարել է Վահեի պահանջը:

Սամվել Ալեքսանյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2020 թ. փետրվարի 11-ին ոչ միայն բեկանել է Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի տվյալ վճիռը, այլեւ ամբողջությամբ մերժել է Վահե Հակոբյանի հայցը:

Վահեն բողոքարկել է Վերաքննիչի որոշումը եւ գնացել Վճռաբեկ, սակայն 2020 թ. ապրիլի 22-ին Վճռաբեկ դատարանը մերժել է նրա բողոքը վարույթ ընդունելը եւ ուժի մեջ թողել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը, որով ամբողջությամբ մերժվել էր Վահե Հակոբյանի հայցադիմումն ընդդեմ Սամվել Ալեքսանյանի եւ «Նոյյան տապանի»:

Այդ գործի պատմությանը ծանոթանալու համար կարող եք ընթերցել նաեւ մեր հրապարակումները՝ «Հարուստները նույնպես լացում են. Վահե Ա. Հ.-ն հերթական ջարդն է կերել Վերաքննիչում» («Սյունյաց երկիր», 26.02.2020 թ.) եւ ««Շոր եւ Շորշոր» փաստաբանական թիմը մի փոքր շտապել էր՝ հայտարարելով «Սյունյաց երկրի» դեմ տարած հաղթանակի մասին» («Սյունյաց երկիր», 19.12.2019 թ.):

Այդ գործով վեճի առարկան Սամվել Ալեքսանյանի 2018 թ. հունիսի 14-ի ասուլիսն էր «Նոյյան տապան» լրատվական կենտրոնի սրահում (https://www.youtube.com/watch?v=blBMG9h7Uq4):

Հ.Գ. 1 Վերոնշյալ դատական գործերում Վահեին ներկայացնում էին թվով հինգ փաստաբան, իսկ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ-ին («Սյունյաց երկիր» թերթին եւ Syuniacyerkir.am կայքին) ներկայացնում էր Սամվել Ալեքսանյանը՝ առանց փաստաբանի:

Հ.Գ. 2 Երեք տարի շարունակ Սամվել Ալեքսանյանը միաժամանակ հայցվորի ներկայացուցիչ էր երկու այլ գործով. հատուկ պատվերով նրա ընտանիքի անդամների վերաբերյալ տարածել էին զրպարտող տեղեկություններ:

Դատական այդ երկու գործով զրպարտիչ պատասխանողների շահերը ներկայացնում էր հայտնի ենիչերիներից ֆինանսավորվող փաստաբանը:

Դատական այդ երկու գործով հանրապետության դատական բոլոր ատյաններում կայացվեց 12 դատական ակտ՝ յուրաքանչյուրը տեւական դատավարության արդյունքում:

Դրանցից երկու դեպքում Սամվել Ալեքսանյանը պարտվեց. դեռեւս կենդանության օրերում մահացած գորիսյան դատավորը վճիռը հրապարակելուց առաջ խոստովանեց, որ իրեն ստիպում են եւ շինծու վճիռ պարտադրում…

Եվ մենք հակագրոհի անցանք. հետագա 10 դատական ակտով ջախջախիչ պարտության մատնեցինք եւ զրպարտիչների նախիրին, եւ տրեխավոր փաստաբանին:

Այդպես էլ դատական ակտերը մտան ուժի մեջ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներով:

Ի դեպ, դրանք այն գործերն էին, որ դատական նիստերի ժամանակ մեր հետեւից Կապանից հատուկ նկարահանող խումբ էին ուղարկում Սիսիան՝ սպիտակ փրփուրը բերանին աղջկա գլխավորությամբ: Մի անգամ նույնիսկ խմբագրության մեքենայի անունից շնորհակալություն հայտնեցինք այդ աղջկանը՝ մեքենայի հետեւի անիվները եւ «գլուշիտելը» քանիցս խնամքով տեսանկարահանելու համար:

Հ.Գ. 3 «Սյունյաց երկրի» դեմ հարուցված վեց քաղաքացիական գործից զատ Վահեն բազմաթիվ քաղաքացիական գործերով էլ պատասխանող է. բոլոր գործերի հիմքում սյունիքյան դրվագներ են:

Այդ ճակատում նույնպես մինչեւ այսօր պարտություն է կրել եւ կրում բոլոր գործերով:

Հ.Գ. 4 «Շոր եւ Շորշոր» փաստաբանական խմբի մեր սիրելի գործընկերներին. ձեզ ցավակցում ենք, բայց եւ տեր ենք մեր խոստմանը՝ եթե հայտնի բույսի բուժման համար փողի կարիք լինի, «Սյունյաց երկիրը», իբրեւ բարեգործություն, կվճարի այն երեք հարյուր հազար դրամը, որի մասին վնգստում էիք հայտնի հեռուստաշոուի ժամանակ:

Հ.Գ. 5 Ընտանեկան հայտնի լժե հեռուստատեսությունում ծառայություն մատուցող հարճը չի՞ ուզում հեռուստաբեմադրություն պատրաստել թիվ ԵԴ/16392/02/18 քաղաքացիական գործի ավարտի մասին, ինչպես արել էր 2019 թ. սեպտեմբերի 6-ից հետո, երբ հրապարակվել էր Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վճիռը, բայց ուժի մեջ մտնելու համար դեռ ճանապարհ պիտի անցներ:

Քեզ տեսնենք, պատվական հարճ…

Հ.Գ 6 Այս մի հետգրությունն էլ «Շոր եւ Շորշոր» փաստաբանական խմբի ականջին թաքուն ենք ասում. Վահեին համոզեք, որ Վճռաբեկում կրած պարտությունը բողոքարկի ՄԻԵԴ-ում, իսկ դուք այդ կերպ մի քանի ամիս էլ տուն կպահեք…

Տեսնո՞ւմ եք՝ ձեր նյութական խնդիրներով էլ մտահոգ ենք:

Հա, էնպես արեք՝ Վահեն չիմանա, որ ԵԴ/16392/02/18 գործով վճռաբեկ բողոքը մերժվել է փաստաբանների անգրագետ ձեւակերպումների պատճառով, թե չէ երկուսիդ էլ հաց ու ջրից կկտրի:

Ասում էինք չէ՞, պետք չէր ուսանող ժամանակ դասերից այդքան շատ փախչել…

Հ.Գ. 7 Քաջարանյան ճակատում դեռ յոթ դատական գործ ունենք, իսկ երեք այլ գործով դատական ակտերն ուժի մեջ են մտել:

Այդ ամենի մասին՝ ավելի ուշ…

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»
7 ՀՈՒՆԻՍԻ 2020Թ.

Կկարողանա՞ Հայաստանի օրվա իշխանությունը Սյունիքում ստեղծել Քաջարանից անկախ դատարան

Սյունիքի մարզը մայր հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության հետ վերամիավորվելու պատմական խնդիրը շարունակում է մնալ հայոց ազգային օրակարգի ամենահրատապ հարցերից մեկը:

Խնդրի առանձնահատկությունն այն է, որ դրա լուծումը չեն ցանկացել ոչ նախորդ եւ ոչ ներկա իշխանությունները:

Ավելին՝ ներկա ու նախորդ իշխանությունները, որ գրեթե բոլոր հարցերում միմյանց միս են ուտում, Սյունիքում ընդհանուր շահեր ու արյունակցություն ունեն եւ ապրում են գրկախառնությամբ, ախպերությամբ. այդ շահն ու արյունակցությունը Քաջարան առանցքն է, որ պետություն է պետության ներսում, ընդ որում՝ Հայաստանի Հանրապետությունից ավելի հզոր պետություն, որ կարող է նույնիսկ Հայաստանի Հանրապետությանը կամք պարտադրել:

Հայոց պետականությանը սպառնացող այդ վտանգի բաղադրիչներից մեկը, անտարակույս, Քաջարանից անկախ դատարանի բացակայությունն է երկրամասում:

Եվ ուրեմն՝ Սյունիքը Հայաստանի Հանրապետության հետ վերամիավորելու առաջին քայլերից մեկը (եթե, իհարկե, կամենում ենք) կարող է լինել մարզում Քաջարանից անկախ ընդհանուր իրավասության դատարանի ստեղծումը:

Ու եթե դա պիտի արվի գործող դատարանի հիման վրա, ապա պետք է ժամ առաջ այդ դատարանի նախագահ Սամվել

iravaban.net

Գրիգորյանին պաշտոնանկ անել եւ քշել Սյունիքից (թող Երեւանում, եթե շատ են ցանկանում, հնարավորություն տան նրան՝ կրկին զբաղեցնելու գործավարի հաստիք որեւէ գրասենյակում):

Երկար ու ձիգ տարիներ գլխավորելով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ այդ տղան այդպես էլ մնաց որպես հայտնի խմբակի ձեռքի գործիքը, մնաց Սյունիքին ու սյունեցուն անհաղորդ եւ իբրեւ մայրաքաղաքից եկող-գնացող տասնյակ տեսիլք-պաշտոնյաներից մեկը:

Եվ, այդուհանդերձ, Սամվել Գրիգորյանի հետագա պաշտոնավարման հարցն այլեւս ածանցյալ է դատարանի՝ չափազանց կարեւոր խնդրի համապատկերի վրա, իսկ խնդիրն առավելագույնս հստակ է՝ Սյունիքը պետք է ունենա Քաջարանից չկախված, Քաջարանով չկաշկանդված, Քաջարանով չղեկավարվող ընդհանուր իրավասության դատարան:

Սյունեցին իրավունք ունի մարզում ունենալ այդպիսի դատարան՝ իր իրավունքներն իրացնելու համար:

Դա կլինի առաջին քայլը Սյունիքի եւ Հայաստանի Հանրապետության վերամիավորման ճանապարհին:

Ի դեպ, կա խնդրի կարգավորման մեկ այլ տարբերակ եւս. Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության գործող դատարանը պաշտոնապես հռչակել Քաջարանի փաստաբանական արտադրամաս, իսկ մարզում ստեղծել նոր դատարան՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով առաջնորդվելու անբեկանելի պայմանով:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»

Սյունիքը դիցարան

Սերգեյ Ումառյանի համանուն գրքից (Երեւան, 1981թ. «Հայաստան» հրատարակչություն)՝ հատվածներ

Սիսական

Սյունիքը պատմական Հայաստանի հյուսիս-արեւելյան խոշոր մարզերից մեկն էր: Այն զբաղեցնում է Սեւանի ավազանից դեպի հարավ-արեւելք ընկած տարածությունը, մինչեւ Արաքս գետը:

Ըստ Շիրակացու «Աշխարհացույց»-ի, Սյունիքն ուներ տասներկու գավառ՝ Երնջակ, Ճահուկ, Վայոց ձոր, Գեղարքունի, Սոտք, Աղահեճ, Ծղուկք, Հաբանդ, Բաղք, Ձորք, Արեւիք եւ Կավսական[1]: Իսկ Սյունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» մատյանում (XIII դար) գավառների մի մասը հիշատակված են տարբեր տառադարձությամբ. *«Իսկ գաւառք ունի երկոտասան. առաջինն որ ունի զբուն գահ իշխանացն եւ հայրապետաց՝ Ծղուկ գաւառ անուանեալ ի Ծղկայ գաւառապետէ: Երկրորդ՝ Վայոց ձոր ի հասարակական դիպուածոց ողբոց եւ աշխարանաց կոչեցաւ Վայոց ձոր: Երրորդ՝ Գեղարքունիքի, որ ի հայկեանն Գեղամայ կոչեցաւ Գեղարքունի: Չորրորդ՝ Սօթից գաւառ, որ սակս հանապազորդեան բբոց եւ դառնաշունչ օդոցն կոչեցաւ Սոթք: Հինգերորդ՝ Աղահէջ գաւառ, որ այժմ կոչի Քաշաթաղ եւ Խոժռաբերդ: Վեցերորդ՝ Հաբանդ գաւառ: Եօթներորդ՝ Բաղք գաւառ, որ այժմ կոչի Աճէն, որ ի Բաղակայ անուանեցաւ: Ութերորդ՝ Կովսական գաւառ, որ այժմ Գրհամ կոչեն: Իններորդ՝ Արեւիք գաւառ, որ այժմ կոչի Դաշտոն եւ Մեղրի: Տասներորդ՝ Ձորք գաւառ, որ ունի զանմատոյց ամուրն Բաղաբերդ, եւ այժմ կոչի Կապան: Մեկատասաներորդ՝ Երնջակ գաւառ եւ Գողթն: Երկոտասաներորդ՝ ճահուկ գաւառ, որ եւ ձորն որ Շահապաւնս կոչի[2]»:*

Սյունիքի տասներկու գավառների հնագույն անունները նույն հերթականությամբ տրված են Ստ. Օրբելյանի գրքի վերջում՝ «Սիւնեաց երկոտասան գաւառաց հարկ եկեղեցւոյ ըստ հին սահմանին» վերնագրով, առանց «այժմ կոչի» նոր անուններով: Միայն եկեղեցահարկի թվարկած տասներկու գավառների հետ պատմիչը ներկայացնում է հին ցուցակներին կից նաեւ երկու գավառանուն՝ Ծղուկից անջատված Այլախ եւ Բաղքից անջատված Քաշունիք գավառանունները:

Սակայն վերոհիշյալ գավառները միջնադարում բաժանվել են եւս փոքրիկ գավառների, ու տեղի են ունեցել անունների փոփոխություններ, որոնց մասին Ստ. Օրբելյանը գրում է. *«Ահա այսոքիկ են գաւառք երկոտասանք գլխաւորք Սիւնեաց: Բայց այլ եւս ունի գաւառս յոլով զորս ոչ յիշեցաք. է որ փոխեալ են անուանք սոցա. է որ յայլ եւ յայլ գաւառս բաժանեալ են»:* Այդ նոր գավառանուններն պատմիչը տվել է իր «Ժամանակագրություն» գրքում: Այստեղ մեր նպատակն է տալ հնագույն տասներկու գլխավոր գավառանունների եւ նրանց տեղանքում գտնվող տեղանունների դիցաբանական ծագումը:

Այսպիսով, քննության առարկան կդիտվի տոհմատիրական, ստրկատիրական եւ վաղ ֆեոդալական հասարակությունների պատմության տեսանկյունից՝ Սյունիքը սեպագիր արձանագրությունների, հայ մատենագիրների եւ օտար աղբյուրների վկայությամբ, Սյունիքը արտասահմանյան գիտնականների եւ նախահեղափոխական հայ եւ ռուս պատմաբանների աշխատություններում եւ, վերջապես, Սյունիքը սովետական պատմաբանասիրության մեջ:

Նախքան գավառանունների ծննդաբանությանն անցնելը, քննենք մարզի Սյունիք եւ Սիսական երկանվան ծագումը, մանավանդ որ վաղնջական ժամանակներից այդ անունները հիշատակվել են զուգահեռաբար:

Սյունիք եւ Սիսական անվան ծագումնաբանությամբ առաջինը զբաղվել է պատմահայր Մովսես Խորենացին, երկրիս անունը կապելով Սիսակ նահապետի անվանը. «Սիսակն այստեղ բնակվելով, իր բնակության սահմանները լցնում է շինություններով եւ երկիրը իր անունով կոչում է Սյունիք[3]»:

Սիսական անվան գիտական մեկնաբանության առաջին փորձը կատարել է գերմանացի հայագետ Պ. դը Լագարդը: Նա Սիսական անվան սի մասնիկը կապել է երկրի նախասկզբնական անվան հետ, իսկ հետագայում, իբր հյուսիսից եկած սակ ցեղը, երբ զբաղեցրեց Սյունիքի տարածքը՝ համաձուլված այդ անունը դարձավ si-sakan[4]:

Սիսական անվան գիտական մեկնաբանության առաջին փորձը կատարել է գերմանացի հայագետ Պ. դը Լագարդը: Նա Սիսական անվան սի մասնիկը կապել է երկրի նախասկզբնական անվան հետ, իսկ հետագայում, իբր հյուսիսից եկած սակ ցեղը, երբ զբաղեցրեց Սյունիքի տարածքը՝ համաձուլված այդ անունը դարձավ si-sakan[4]:

Պատմությանը հայտնի է, որ նախքան մեր թվագրությունը (VII-VIII դար) հնդիրանական ծագում ունեցող սակերը հյուսիսից արշավեցին դեպի հարավ: Բայց թե տեղաբնիկ si կոչված ցեղը ինչ լեզվախմբի է պատկանել, մեզ հայտնի չէ:

Սյունիքի եւ նրա որոշ տեղանունների մասին է խոսել նշանավոր հայագետ Հ. Հյուբշմանը իր «Հին հայոց տեղւոյ անունները» աշխատության մեջ: Ավելորդ չենք համարում ամբողջությամբ մեջ բերել նրա կարծիքը:

«Բայց թէ անունս սկզբնաբար ժողովրդեա՞ն անուն էր, թէ երկրին եւ թէ ուսկի՞ց յառաջ կուգայ, չենք գիտեր: Սիւնիք բաժնելով տոհմի անուն (այսպես Արծր-ունի, հոգ.՝ Արծրունիք, Բագրատ-ունի, հոգ.՝ Բագրատունիք եւն) մեկնել՝ ապահով չէ: Երբեք Սիւնիք անունն է՝ երկրին մէկալ Սիսական անուանը հետ նոյնը չէ: Սիսականը այն անունն է, որ Սիւնիք Պարսից եւ ապա նաեւ Արաբացւոց եւ Ասորւոց բերնին մեջ կըկրեր: Սիւնիքը, եւ երկրորդ՝ արաբացի պատմագիրներն երկիրս կանուանեն Sisajan (հին պարսկ. Sisagan – միջ. պարսկ.՝ Sisakan):

Հետագույն հայերը Սիսական հին անունը երկրին էլ տվին եւ Սիւնիք անվանն նույնացրին: Փավստոսը, Ագաթանգեղոսը, Եղիշեն, Ղազարը միայն Սիւնիք անունը գիտեն, Կորյունը, Սյունիքից բացի, գործ է ածել Սիսական անունն իբրեւ տոհմի անուն, Խորենացին գործ է ածում Սիւնիք երկրի անուն, բայց «Սիսականն ազգին, Սիսական գնդին» եւն եւ ասում է՝ թե «այս անունը պարսկական է»: Սիսական իբրեւ երկրանուն նա տալիս է Արցախի մի նահանգի անունը՝ Սիսական ի Կոտակ (Փոքր Սիսական): Ստ. Օրբելյանը լոկ երկրանուն գործ է ածում Սիսական կողմն, Սիսական, աշխարհս Սիսական, իսկ շատ անգամ էլ՝ տոհմանուն:

Ըստ այսմ՝ Սիւնիք է երկրիս բնիկ անունը, իսկ Սիսական սկզբնաբար Սիւնեաց մեջ իշխող տոհմին պարսկերեն անունը: Պարսիկները տոհմին անուամբ երկիրն ալ կոչած են: Ինչպես ըսինք, կենթադրէ միջ. պարսկ. Sisakan մը, որ կրնայ թերեւս sis է (հնագույն ses?) մը առած եկած ըլլալ՝ վրան - ական. օրինակ՝ Ատրոպատ - ական, այդպիսով Սիսեան կամ Սիսական» երկիր կնշանակէ: Մ. Խորենացին ենթադրում է, որ Սիսակ նախարարի անունից է Սիսականը, որը առասպելական է [5]»:

Հ. Հյուբշմանը Սիսական անունը չի ծննդաբերում Սիսակ նախարարի անունից: Հայագետը կռահել է, որ Սիսական անվան հիմքը «sis է (հնագույնը՝ ses)», բայց չի բացատրել, թե, արդյոք, ինչ է նշանակում ական պահլավերեն հոգնակի ածանցով այդ անվանահիմքը, որը թյուրիմացությունների տեղիք է տվել հետագա ուսումնասիրողներին:

Կորյունը եւ Խորենացին, երբ Սիսական անունը գործ են ածել «Սիսական տոհմի», «Սիսական ազգի» եւ «Սիսական գնդի» ձեւերով, բնավ չի նշանակում, որ նրանք ժխտել են սիսականը որպես երկրանուն: Նրանք կարող էին գրել նաեւ Սիւնեաց տոհմ, Սիւնեաց ազգն եւ Սիւնեաց գունդն: Բայց կարծում ենք միեւնույն անունը չկրկնելու համար են այդպես գրել, որովհետեւ զուգահեռաբար գոյություն են ունեցել Սիւնիք եւ Սիսական երկրանվան տարբերակները: Իսկ մյուս կողմից՝ ինչո՞ւ Սիսական ի Կոտակը պետք է երկրանուն հասկանալ, բայց բուն Սիսական անունը՝ տոհմանուն... Սա բնավ էլ տրամաբանական չէ:

Հայ ուշ շրջանի մատենագիրները ճիշտ են հասկացել իրենց նախորդներին, երբ Մովսես Կաղանկատվանցին հիշատակում է « Սիսական նահանգ», իսկ Ստեփանոս Օրբելյանը՝ «Սիսական գաւառն», «Սիսական աշխարի» եւ «Սիսական կողմն»:

Սյունիք անվան ծագման մասին նույնպես խոսել է Կ. Շահնազարյանը, որը 1859 թ. Փարիզում հրատարակած Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսականի» առաջաբանում փորձել է Սյունիքի մի քանի տեղանունների գերմանական ծագում վերագրել. *«...մինի ցեղից գոթաց կոչեր Suiones (սիյօն), զոր համարիմ կոչեցեալ ի մերոց Սիւնի փոխելով այսպէս զրուն անուն երկին, որ էր Սիսական [6]».*

Եթե հարցին մոտենանք միաբանի պես, ապա աշխարհում ինչ-որ չափով նմանահնչյուն ցեղանունները պետք է տեղադրենք Սիսական աշխարհում: Իսկ ինչպե՞ս պետք է վարվենք, օրինակ, Եթովպիայի Agare Sisiay տեղանվան հետ, որը հնչյունական ավելի մոտիկություն ունի Սիսական անունը: Կ. Շահնազարյանի կարծիքը գիտական հիմքից զուրկ է, ուստի նրա մյուս «ստուգաբանություններին» չենք անդրադառնում:

Դարասկզբին քննարկվող հարցի շուրջը եղել են տարակարծիքներ, ձգտել են յուրովի ապացուցել Սիւնիք եւ Սիսական անունների ծագումը: Ն. Ադոնցը «Армения в эпоху Юстиниана» աշխատության մեջ բերել է Սյունիքի մասին եղած հայ եւ օտար աղբյուրներից տվյալներ: Ադոնցը վկայակոչել է ասորի հեղինակ Զաքարիայի (VI դար) «Ժամանակագրություն» գիրքը, որտեղ ասված է. «Սիսական երկիրը իր լեզվով...»: Վերջինս Ադոնցին գցել է թյուրիմացությունների մեջ, երբ գրել է. *«Несомненно, лишь одно, что албанская окраина Армении, Сюния, по населению отличалась несколько от центральных частей Армении [7]».*

Զաքարիա Հռետորը շեշտել է ոչ թե հայերենի հետ կապ չունեցող մի ինչ-որ լեզու, այլ խոսքը Սյունիքի հայերեն յուրահատուկ բարբառի մասին է: Սակայն այդ չի նշանակում, որ եթե Սյունիքի բարբառը Հայաստանի կենտրոնական մասի բարբառից (լեզվից) տարբերվել է, ապա սյունեցիները էթնիկապես տարբեր ցեղ են եղել: Այստեղ Ադոնցը սխալ է, որովհետեւ Հայաստանի կենտրոնական մասի բարբառներից տարբեր էին նաեւ Վանի, Մուշի, Սասունի, Արդահանի, Գուգարքի եւ մյուս ծայրագավառների հայ բարբառները:

Ինչպես տեսանք՝ ասորի հեղինակը նույնպես տալիս է «Սիսական երկիր»[8] անունը:

Արաբ հեղինակ Իբն ալ-ֆակիլ ալ-Համադանին (X դար) գրել է, որ խալիֆ Օսմանը (VII դար) բանակ է ուղարկել Դերբենտի անցքը հյուսիսից պաշտպանող Սիսան բանակի դեմ: Եվ նա ավելացնում է, որ այդ բանակը հայկական էր: Իսկ ըստ ռուս պատմաբան Կարաուլովի՝ Սյունիքի այդ զինվորներին արաբներն անվանում էին հոգնակի թվով՝ «սիասիջին» (ժամանակից՝ Սիսաջան)[9]:

Այդ մասին նույնպես վկայում է Օրբելյանը, երբ գրում է, թե հայոց Վաղարշակ թագավորը (II դար) Սիսական ցեղից է նշանակում. «ընդդեմ կալ հանապազ պատերազմաւ դրանն Հոնաց, որոյ անուն առաջնոյն Սիսակ կոչիւր»:

Այս մեջբերումը Ադոնցի մոտ աղավաղված է: Նա օգտվել է մոսկովյան հրատարակությունից, որտեղ առկա է ոչ թե՝ «որոյ անուն առաջնոյն Սիսան կոչիւր», այլ՝ «որոյ անուն առաջնոյն Սիսակ կոչիւր»[10]: Սիսան անունը օգտագործված է արաբերեն տեքստի մեջ:

Այս բոլորից հետո Ադոնցը երկմտել է, թե, արդյոք Սիսան ձեւը կրճատված Սիս (ակ) ան կամ Սիս (աջ) ան անո՞ւնն է, թե պետք է ընդունել Հ. Հյուբշմանի ենթադրած Սիս ինքնուրույն հիմքը ան հոգնակիի հետ, որի զուգահեռն ունենք՝ Սիսիան անունը: Այնուամենայնիվ, նա գտնում էր, որ Սիսիան անունը Սիսական անվան կարճ ձեւն է: Բայց գիտնականը չպետք է անտեսեր, որ ական հոգնակի կազմությամբ գավառանունները չեն ենթարկվել բառակազմական նման փոփոխությունների, ինչպես Վասպուրական, Բաղասական, Արուական, Գուկական, Կովսական, Ատրպատական եւ այլն:

Ն. Ադոնցը նույնպես Սիսական անվան սիս հիմքը անվանել է պարսկական ծագում ունեցող, բայց տարակուսել է. «Является ли Сис называнием особого племена, или он одного происхождения с Сиюнік, неясень. Форма Сиюнік древнее Сисакан»: Այնուհետեւ, գիտնականը սիս հիմքը համարում է S-ի թեքում՝ Si-k՛, երբ բառակազմության ժամանակ տեղի է ունենում S հնչյունի կորուստ, ինչպես. «Բաղաս-ական k բաղ-ք, Moks-ena k Մոկ-ք, Akilis-ena K Եկեղի-ք»[11]:

Նշված տեղանուններում միայն հնագույն s հոգնակերտ փոքրասիական ածանցն է փոխվել հայերեն f հոգնակիի: Հնչյունափոխության այս կարգը բնավ կապ չունի Ադոնցի ենթադրած sis-si եւ ապա si-k, Սիսական- Սիւնիք փոխանցման հետ: Սյունիքում եւ նրա սահմաններից դուրս sis հիմքով Սիսական, Սիսական ի Կոտակ, Սիսիան, Սիսանձոր, Սիսիձոր, Սիսկայա, Սիսկերտ, Սիսքար, Սիսթափա, Սիսու, Սես, Սիս եւ այլն տեղանուններում sis - ը անփոփոխ պահպանվել է որպես տեղանվան էությունն արտահայտող բառակազմիչ արմատ:

Երկար քննությունից հետո Ադոնցն, ի վերջո, եկել է այն համոզման, ու Սիսական անունն առաջացել է հյուսիսից եկած սակ ցեղանունից:

Շարունակելի

Ծանոթագրություն

1. Աբրահամյան Ա. Գ., Շիրակացու մատենագրությունը, Եր. 1944, էջ 350:
2. Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆ. 1911, էջ 12:
3. Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Եր.1968, էջ 92:
4. Адонц Н., Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, стр. 421 – 422.
5. Հյուբշման Հ., Հին հայոց տեղւոյ անունները, Վ. 1907, էջ 96:
6. Շահնազարյան Կ., Սիւնիք, էջ 12 (տես, Ստ. Օրբ. Պատմ. առաջաբանը):
7. Адонц Н., Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, стр. 423.
8. Ասորական աղբյուրներ, Եր., 1976, էջ 314:
9. Караулов, Сборник Кавказа XXXI, стр. 17 – 27, Адонц Н., Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, стр. 422.
10. Ստեփանոս Օրբելյան, Պատմ. Մոսկ. 1891, էջ 9:
11. Адонц Н., Там же, стр. 423.

Սուրբ եւ անմահ պատարագ Վահանավանքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում

Հունիսի 26-ին Վահանավանքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Մակար վարդապետ Հակոբյանը, Սյունյաց թեմի հոգեւոր դասի մասնակցությամբ, մատուցեց սուրբ եւ անմահ պատարագ՝ նվիրված Սուրբ Գրիգոր Լուսավորչի Գյուտ նշխարաց տոնին (Սբ. Գրիգոր Լուսավորիչ հայրապետի նշխարների գյուտի տոնը):

Պատարագի մասնակիցներն աղոթք բարձրացրին առ Աստված՝ խնդրելով առողջություն ամբողջ մարդկությանը եւ առանձնապես հայ ժողովրդին՝ համայն աշխարհին ներկայումս համակած համաճարակի պայմաններում:

Պատարագին մասնակցում էր նաեւ Կապան համայնքի ղեկավար Գեւորգ Փարսյանը:

Հ.Գ. 1 Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահի որոշմամբ այսուհետ թեմի բոլոր չգործող վանքերում եւ եկեղեցիներում կմատուցվի պատարագ:

Հ.Գ. 2 Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Մակար վարդապետ Հակոբյանը, Սյունյաց թեմի հոգեւոր դասի հետ, նույն նպատակով եւ աղոթքներով օրերս պատարագ էր մատուցել նաեւ Սիսիանի տարածաշրջանի Որոտնավանքի Սուրբ Ստեփանոս եկեղեցում: //

ՈՎ Է ՄՏԱՎՈՐԱԿԱՆԸ

«Հայ ազգը պետք ունի թե՛ զենքով կռվող հերոսների եւ թե՛ մանավանդ մտավոր ազնվական դասի»:

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Դազարավոր տարիների իր պատմության ընթացքում մեր ազգը բազմիցս է ապացուցել, որ զենքով կռվող փայլուն հերոսներ ունի: Այլ բան է, թե ինչպես ենք օգտվել այդ հզոր ուժից: Երբ տեղին ու ժամանակին ենք խթանել այն ու կիրառել, հաղթանակը չի ուշացել: Մեր պատմական ճանապարհին այդպիսի փաստերը բազմաթիվ են: Վերջին օրինակը 1990-ի առաջին տարիների Արցախյան գոյամարտն էր, որտեղ սխրանքի փայլուն էջեր գրելով՝ հայ հերոսը կերտեց պատմական հաղթանակը: Քանի որ մեր քննարկման նյութը սա չէ, բավարարվենք այսքանով եւ փորձենք պարզել, թե ով է մեր «ազնիվ մտավորականը», ինչ տեղ ու դեր պետք է ունենա երկրի-պետության կյանքում եւ որտեղ է հիմա նա:

Մեծ գրողն ու մտածողը հատուկ ընդգծել է ազգի համար «մանավանդ մտավոր ազնվական դաս»-ի կարեւորությունը, այսինքն՝ նրան դնում է անգամ «զենքով կռվող հերոսներ»-ից առաջ:

Նախ պարզենք՝ ով է մտավորականը:

Վիքիբառարանը բացատրում է. մտավորականը մտավոր աշխատանքով զբաղվող գիտության, տեխնիկայի եւ մշակույթի բնագավառներից մեկի անհրաժեշտ գիտելիքներ եւ կրթություն ունեցող մարդն է:

Ընդհանուր առմամբ համաձայնելով այս բացատրությանը, պետք է ասել, որ, ըստ իս, այն ոչ միայն լիարժեք չի արտահայտում մտավորական հասկացության բովանդակությունը, այլ նաեւ զգալիորեն նեղացնում, նույնիսկ սահմանափակում է այն:

Երկրի, պետության դիմագծի, նրա գործունեության տիրույթում մտավորականը շատ ու շատ ավելին է, քան զուտ մտավոր մասնագիտական աշխատանքով զբաղվողը: Հասարակության մեջ այդպիսիք կազմում են առանձին դաս: Իր մասնագիտական գործունեությունից զատ կարեւորագույն դեր ունի տվյալ երկրի ու պետության կյանքում: Նա պետք է առաջնորդի այդ հասարակությանը, նրանում գործունեություն իրականացնող քաղաքական-հասարակական կազմակերպություններին, ձեւավորած իշխանություններին, ինչքան էլ վերջիններս չցանկանան դա՝ խոչընդոտներ հարուցելով նրան:

Ցանկացած երկրի համար նշվածը կենսական է, հատկապես ժողովրդականացման ուղին բռնածների: Որտեղ այս չափանիշը խախտվեց, այնտեղ ոչ միայն խստորեն կտուժի ժողովրդավարությունը, այլեւ կսահմանափակվեն ազատ խոսքն ու մարդու իրավունքները, երկրի զարգացման հեռանկարը կդառնա խիստ աղոտ, խմբային-կուսակցական շահը՝ իշխող: Սա լավ բան խոստանալ չի կարող: Իրականության մեջ, իր նրբերանգներով հանդերձ, եթե թելադրողը մտավորականությունը չէ, այլ իշխանությունն է, ապա բանը կարող է հասնել նույնիսկ ավտորիտարիզմին:

Իրական մտավորականը երկրի ամենաազատ, ամենաանկախ, հարուստ գիտելիքներով խիզախ անձն է: Այս տեսակետից մտավորականների դասը թվով մեծաքանակ չի կարող լինել, բայց տեսակարար կշռով հզոր է: Նա որեւէ կուսակցության ֆանատիկորեն չի զինվորագրվում, որեւէ քաղաքական կամ այլեւայլ հոսանքի գերին չի դառնում, նրա մասնավոր շահը չի սպասարկում: Անդամատոմս ունենալը ոչինչ չի նշանակում, անգամ երկրորդական, երրորդական էլ չէ նրա համար, ավելի հետին պլաններում է: Օրինակներ՝ ինչքան ուզեք... Հովհ. Թումանյան, Ավ. Իսահակյան-դաշնակ, Վիկտոր Համբարձումյան-կոմունիստ... չեմ շարունակում: Այս եւ նման մյուսների համար կուսակցականությունն անչափ քիչ բան է նշանակում, երկրի ու ժողովրդի շահն է նրանց դավանանքը: Հովհ.Թումանյանն իր ստեղծագործությամբ եւ ամբողջ առօրյայով ծառայում էր ազգին՝ ընտանյոք հանդերձ լծվելով հազարավոր որբերի եւ հայրենիքի փրկության սուրբ գործին, Ավ. Իսահակյանը՝ հայոց եղեռնը կազմակերպողների վերացմանը, Վիկտոր Համբարձումյանը եւ Հենրիկ Իգիթյանը՝ մյուսների հետ մեկտեղ՝ պատմական անարդարությունը դատապարտելուն եւ Արցախը Հայաստանին միավորելու պայքարին եւ այլն:

Միթե պատահական էր, որ հայ ազգային մեծ գործիչը՝ Ալեքսանդր Մյասնիկյանը, 1921թ. մոխրի վերածված, տկլոր ու սոված մեր հինավուրց երկրի այս հատվածի վերածնունդը տեսավ մտավորական դասի ձեւավորման մեջ, որին ջերմորեն արձագանքեցին գիտության, կրթության, երաժշտության, նկարչության եւ ընդհանրապես ստեղծագործական աշխարհի (գրողներ, ճարտարապետներ եւ այլն) երեւելի անհատները եւ կազմեցին երկրին ու հանրապետությանը կենսականորեն անհրաժեշտ դասը:

> ***Մեծ առումով՝ ոչ թե մտավորականը պետք է լսի իշխանավորին, այլ իշխանավորը նրան:***

Ապա նայեք. Աճառյան, Մանանդյան, Սարյան, Սպենդիարյան, Թամանյան... այս եւ նրանց նման մյուս մարդիկ որեւէ կուսակցության չէին պատկանում, նրանք մի կուսակցություն ունեին՝ դա ժողովուրդն էր, որին զինվորագրված էր նաեւ Չորավար Անդրանիկը: Նրանք անհատապես, թե կոլեկտիվ, նախ եւ առաջ թելադրող են ու հետո կատարող: Իշխանությունները պետք է նմաններին լսելու, նրանց հետ խորհրդի նստելու կարողություն ունենան, այլապես, մեղմ ասած, վատ կլինի, որից կտուժեն ժողովուրդն ու պետությունը:

Բնական է, տարբեր պատմական ժամանակաշրջաններում մտավորականության դասն առանձնահատուկ է իրեն դրսեւորում: Պետականության պայմաններում, հասկանալի է, ավելի հեշտ է ինչպես նրա ձեւավորումը, այնպես էլ գործունեությունը: Դրա բացակայության միջոցին անչափ դժվար է իրականացնել այն: Օրինակն այսօրվա մեր սփյուռքը, ավելի վաղ՝ պետականազրկության շրջանում, շատ ավելի ծանր է եղել մտավորականի կայանալը: Այնուհանդերձ, հայ ժողովուրդը գոյատեւել եւ այսօրվան է հասել իր լուսավոր մտավորականների անդուլ ջանքերի եւ անմնացորդ նվիրումի շնորհիվ: Եվ շատ դեպքերում դա որոշիչ է եղել:

Խաղաղ-հանգիստ ժամանակներում հասարակության մեջ մտավորականին տեսնողներ շատ չեն լինում, չնայած այդ դասն իր անելիքը միշտ բարեխղճորեն կատարում է, սակայն երբեք չի բարձրաձայնում՝ իրականում նրան բնորոշ է համեստ ու զսպված պահվածքը: Բայց հենց ազգը, երկիրը դեմ են առնում դժվար խնդիրների, ժողովրդի բոլոր հատվածները ձայն են բարձրացնում՝ ու՞ր է մեր մտավորականությունը:

Դա պատահական հարցադրում չէ եւ անչափ ճիշտ է: Բա ո՞ւմ դիմեն, չէ՞ որ խնդիրներն առաջացել են հենց իշխանությունների մեղքով, պատճառը նրանք են հանդիսացել, հո նրա՞նց չէին դիմելու: Տվյալ դեպքում Աստծուն դիմելն էլ օգուտ չի տալիս: Պետք է դիմել մտավորականությանը՝ նրա մտքին, հեղինակությանը՝ ճիշտ ճանապարհը գտնելու համար, որքան էլ դա հաճելի չլինի իշխանությանը:

Խոհեմ իշխանությունը պետք է այն հաճույքով ընդունի եւ ամենայն պատասխանատվությամբ ձեռնամուխ լինի գործին՝ խոր հարգանքով օգտագործելով մտավորականության ներուժը:

Իրական մտավորականությունը ցանկացած երկրում, մեր երկրում առանձնապես, պետք է գործող իշխանությանն օպոզիցիա-ընդդիմադիր լինի: Չեմ ասում քանդողավերող կամ թշնամի, ուղղակի ընդդիմադիր: Երկրի համար այսպիսի կեցվածքն ուղղակի բնական անհրաժեշտություն է:

Նա պետք է հանդես գա թարմ, առաջադիմական մտքերով, վեր հանի օրվա կառավարության սխալներն ու թերությունները, եթե կարիք զգացվի՝ անողոք քննադատության ենթարկի

Սյունիքի ոստիկանապետ Գեւորգ Ազիզյանը հեռացվել է Սյունիքից

SHAMSHYAN.com-ի տեղեկություններով՝ հունիսի 26-ին, ՀՀ ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Վահե Ղազարյանի հրամաններով կադրային փոփոխություններ են տեղի ունեցել ոստիկանության մարզային վարչություններում:

Վ. Ղազարյանի մեկ այլ հրամանով Ալիկ Հակոբյանը նշանակվել է ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետ, ով ՀՀ ոստիկանապետի մեկ այլ հրամանով ազատվել է ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետի օպերգծով տեղակալի պաշտոնից:

Վ. Ղազարյանի մեկ այլ հրամանով Գեւորգ Ազիզյանն ազատվել է ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետի պաշտոնից: //

Գնահատանքի խոսք

Շնորհակալություն եմ հայտնում Կապանի շտապ օգնությանը եւ հատկապես այդ ծառայության ղեկավար Նարեկ Գաբրիելյանին՝ երկրի համար այս ծանր պայմաններում օրինակելի ծառայություն մատուցելու համար:

Բժիշկների ընտանիքում ծնված երիտասարդ Նարեկ Գաբրիելյանը խելացի մասնագետ լինելուց բացի, օժտված է մարդկային բարձր հատկանիշներով:

Վերջերս նա իմ հարազատի հիվանդությունը ճիշտ ախտորոշելով՝ սրտամկանի սուր ինֆարկտ, ժամանակին հասցրեց Երեւան եւ փրկեց նրա կյանքը:

Իմացա նաեւ, որ Գաբրիելյանը շտապ օգնության մեքենայով մեկ ուրիշ հիվանդի Երեւան տեղափոխելիս վթարի է ենթարկվել: Հուրախություն բոլորիս ամեն ինչ լավ է ավարտվել: Առողջություն՝ բժիշկ Գաբրիելյանին եւ նրա գործընկերներին:

ԱՆԱՀԻՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կապանը որդեգրել է հեծանվային մշակույթի քաղաքականությունը

Կապանը դարձել է Հայաստանի այն օրինակելի համայնքներից, որտեղ հեծանվային մշակույթ որդեգրելու քաղաքականությունը գրկաբաց է ընդունվել եւ որտեղ «Հեծանվային Կապան. կանաչ փոխադրամիջոցների ներմուծում Կապան համայնք» ծրագրի միջոցով ստեղծվում են համապատասխան հեծանվային ենթակառուցվածքներ: Օրերս Կապանի համայնքապետարանի աջակցությամբ թվով 20 հեծանվային նախազգուշացնող, թելադրող եւ կարգավորող նշաններ տեղադրվեցին Կապանի մի շարք փողոցներում, որոնք կօգնեն ոչ միայն հեծանվորդներին, այլեւ վարորդներին ու հետիոտներին հետեւել երթեւեկության անվտանգության կանոններին եւ նվազեցնել երթեւեկության հնարավոր ռիսկերը ճանապարհներին:

«Զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ն խորին շնորհակալություն է հայտնում Կապանի համայնքապետարանին, ի դեմս համայնքի ղեկավար Գեւորգ Փարսյանի, ծրագրում ունեցած ներդրման եւ աջակցության համար: Ինչպես նաեւ մեր շնորհակալություն է հայտնում Կապանի կոմունալ ծառայությանը՝ ճանապարհային նշանների տեղադրման աշխատանքներն իրականացնելու համար:

Հիշեցնենք, որ ծրագիրն իրականացվում է «Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստան» ծրագրի շրջանակներում: Ծրագրի գործադիր մարմինը ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունն է: //

Նրան՝ որպեսզի տեղի չունենա անկանխատեսելին: Սա պետք է դիտել նաեւ որպես մտավորական դասի պարտականություն:

Ընդհանրապես անհրաժեշտ է ընդգծել, որ մտավորականություն ասվածը դրական կատեգորիա է, զուրկ է ծայրահեղություններից, մտացածին հորինվածքներից: Նրանք այն անձինք են, որոնց խոսքն ազդեցություն ունի հասարակության վրա, ընդունվում է նրա կողմից: Հիմնականում հանդես են գալիս անհատապես, սակայն վճռորոշ պահերին մտավորականությունը համախմբված է ներկայանում՝ այս կամ այն հարցի վերաբերյալ արտահայտում իր կարծիքը:

Սկզբում նշեցի, որ մտավորականը միանգամայն անկախ, ազատ եւ անաչառ կեցվածք ունեցող անձն է: Գուցե որոշները մտածեն, թե բանը ծայրահեղության եմ հասցնում: Բայց այլ կերպ լինել չի կարող: Եթե իրեն մտավորական համարողը գնա այս կամ այն կուսակցության հետեւից, լծվի իշխանության առօրյա գործերին, ստիպված է լինելու որոշակի չափով հեռանալ անաչառության, անկողմնակալության գծից: Այսինքն՝ լավագույն դեպքում նվիրումն այս կամ այն կողմին կիսատ է լինելու: Մինչդեռ, ինչպես հայտնի է, կիսատ նվիրում չի լինում, հատկապես մտավոր ասպարեզում: Դրա համար եմ ասում, որ, ըստ Կոստան Զարյանի՝ «Ազնիվ մտավորականներ»-ը շատ չեն լինում:

Բարեբախտաբար մեզ բախտ է վիճակվել, ինչպես խորհրդային ժամանակներում, այնպես էլ ներկայումս ոչ միայն տեսնել, այլ նաեւ շփվել իրական մտավորականների հետ՝ չնայած հիմա շատ պակաս է նրանց թիվը:

Մեծ առումով՝ ոչ թե մտավորականը պետք է լսի իշխանավորին, այլ իշխանավորը նրան: Եվ այն պետք է կատարվի, ինչպես հիմա են ասում, տարբեր ֆորմատներով: Նրանք երկուսն էլ ունեն գործելու իրենց առանձին դաշտը: Մտավորականը հանդես է գալիս հարցազրույցներով, հանդիպումներով, հրապարակային ելույթներով, գրավոր հրապարակումներով, նրանց խումբը կամ դասը՝ հայտարարություններով, կոլեկտիվ ներկայանալու կամ ներկայացնելու այլ եղանակներով:

Ըստ էության՝ մտավորականի համար էական նշանակություն չպետք է ունենա, թե տվյալ պահին ով է պետության ղեկին կամ ինչ քաղաքական ուժի ձեռքում է իշխանությունը: Նա պետք է իր գործն անի:

Այդպիսի մտավորականներ էին Մարտիրոս Սարյանը, Վիկտոր Համբարձումյանը, Գրիգոր Գուրզադյանը, Ակսել Բակունցը, Եղիշե Չարենցը, Հովհաննես Շիրազը, Սիլվա Կապուտիկյանը, Սերգեյ Համբարձումյանը, Սերգեյ Փարաջանովը, Հենրիկ Իգիթյանը, Լուիզա Սամվելյանը, Տիգրան Պետրոսյանը, Համո Սահյանը եւ ուրիշներ: Մերօրյա մտավորականների մեջ իր առանձնահատուկ նկարագրով է ներկայանում Հովհաննես Չեքիջյանը:

Տեսնում եք՝ որեւէ մեկին պաշտոնապես չեմ ներկայացնում՝ համոզված լինելով, որ անգամ այսօրվա սերունդը նրանց բոլորին էլ լավ գիտի:

Անկասկած է, որ մտավորականը պետք է լինի անաղարտ նկարագրի տեր, օժտված բարձր բարոյականությամբ: Մինչդեռ այսօր էլ հանդիպում ենք, երբեմն նաեւ ոչ քիչ հայտնի մարդկանց, որոնց ճանաչում են իբրեւ մտավորականի, բայց իրականում... Տեսնում ես՝ քսմսվում է այս կամ այն իշխանավորին՝ (դե ամենաբարձրին էլ չեմ ասում), փորձում ամեն կերպ հաճոյանալ նրանց, ոչ միայն կիսել, այլ նաեւ գովաբանել նրանց՝ միջակից էլ ցածր կարծիքը, միտքը: Ցավոք կան այնպիսիներ, ովքեր խոնարհվում, երկու կես են լինում հանդիպմանը, կեղծ ժպիտով, խունջիկ-մունջիկ անելով ողջագուրվում, եթե, իհարկե, դիմացինի հայացքում դրա թույլատրվելը նկատում են... Մի՞թե այսպիսի «պերսոնը» մտավորական կոչվելու իրավունք ունի:

Լինում է այնպես, որ ինչ-ինչ նկատառումներով իշխանավորն է այցելում, շնորհավորում նրան տանը: Վայ մտավորականը դրանից ուղղակի հալվում է, հանդիպման նկարահանած նյութը կտակում տասներորդ սերնդից էլ այն կողմ:

Արժանապատիվ մտավորականը երբեւէ իր դիրքից չի իջնում: Այդպիսի մի պահվածքի վերջերս մենք ականատես էինք, որը պարգեւեց Մեծ մաեստրոն՝ Հովհաննես Չեքիջյանը: Ափսոս՝ նրա նմանները հիմա քիչ են:

Մտավորականների գերակշիռ մասը կենտրոնացած է գիտական հիմնարկներում, ստեղծագործական միություններում, ուսումնական կենտրոններում ու հաստատություններում եւ այլն: Խորհրդային տարիներին, հատկապես 1950-ականների երկրորդ կեսից սկսած, այսպես ասած՝ այդ ամբիոնը, մտավորականությունը լավագույնս էր օգտագործում:

ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի, ՀԽՍՀ Գրողների միության, Երեւանի պետական համալսարանի եւ էլի մի շարք հաստատությունների կոլեկտիվների առաջ հանդես էին գալիս երկրի բարձր ղեկավարները, ծավալվում էր քննարկում, որտեղ իշխանավորները սուր եւ հասցեական քննադատության էին ենթարկվում մտավորականների կողմից, միաժամանակ իրենց հետ տանում էին նրանց կողմից արած առաջարկություններն ու ներկայացրած պահանջները: Նման ժողովների ամեն ղեկավարի չէ, որ երաշխավորում էին մասնակցել, եւ ամեն ղեկավար չէր, որ սիրով էր համաձայնում մասնակցել այդպիսի հանդիպումների: Մի խոսքով՝ պատասխանատվությունն անչափ մեծ էր, հատուկ պատրաստվելը՝ պարտադիր:

Շատ ցավալի է, որ մեր անկախ իրականության մեջ այս ամբիոնը չի գործում: Եզակի, դեպքից-դեպք հանդիպումների ժամանակ էլ, իշխանավորի կծու կեցվածքին ի պատասխան, երբեմնի կրակոտ հանդես եկողները լռելով դժգոհ հեռանում են: Այսքանի հետ մեկտեղ, մեր պարբերականներում, նաեւ ինտերնետային-վիրտուալ ցանցում չկան ներկայումս մեր երկրին, պետությանը հուզող հրատապ խնդիրների վերլուծությունները, այդ բնույթի այլ հրապարակումները:

Այս վիճակը լավ բան չի խոստանում, որը նախ եւ առաջ պետք է անհանգստացնի մեր իշխանություններին: Առաջին հայացքից գուցե դա նրանց դուր է գալիս, բայց ականջի այս հանգստությունը կարող է այնպիսի քուն բերել, որը շատ ծանր կնստի երկրի ու ժողովրդի վրա:

Կարող է որոշ մարդկանց, հատկապես իշխանությունում գտնվողներին, զարմանալի թվա, բայց շատ անհրաժեշտ է ու պահանջված, որ իշխանությունները ոչ միայն ցանկալի պայմաններ ապահովեն մտավորականության ազատ ու անկաշկանդ գործունեության համար, այլ նաեւ նյութապես, բարոյապես եւ բազմակողմանիորեն աջակցեն, որ հասարակական այդ ինստիտուտը կարողանա կատարել իր պատասխանատու խնդիրը՝ ժամանակի պահանջներին համահունչ զարգացում ապրելով: Վերջին հաշվով շատ ու շատ բանով, ինչպես երկրի զարգացման, նրա անվտանգության ամրապնդման, այպես էլ ներքին՝ այնքան անհրաժեշտ համերաշխության ու ժողովրդի համախմբման գործում վճռական է նրա խոսքը: Չի կարելի սա հաշվի չառնել: Հասկանում եմ, որ ասածս որոշակի քաղաքական մշակույթի պայմաններում կարող է իրականացվել, բայց մի՞թե այլ ճանապարհ կա: Իշխանությունները պետք է գիտակցեն, որ այս առումով նրանք այսօր պետք է անհանգստանան, որ վաղը կարողանան հանգիստ զգալ իրենց: Ազգի ճակատագրից ելնելով՝ նրանք մտավորականության հետ միասին պետք է քննարկեն օրախնդիր հարցերը, մոդելավորեն ապագան, քանզի իրենք են կրում դրա ողջ պատասխանատվությունը:

Մտավորական լինելը ոչ մասնագիտություն է, ոչ էլ պաշտոն, այն կոչում է՝ այն էլ շատ բարձր: Բարձր է նրա համար, որ այն որեւէ իշխանական կամ այլ ղեկավար մարմնի կողմից չի շնորհվում, չի նշանակվում: Բայց հետաքրքիր է, որ այդ կոչումից զրկվելու ձեւ ու հնարավորություն կա:

Ընդունելով անհատի խոսքն ու միտքը՝ ժողովուրդը նրան ճանաչում է որպես մտավորական: Եթե շեղվեց այդ ճանապարհից, երես է թեքում նրանից ու անմիջապես զրկում այդ բարձր հասարակական դիրքից:

Հարվածը շատ հզոր է իրական մտավորականի համար, կարելի է ասել՝ կործանարար:

Մեր իրականության մեջ գործում է նաեւ, այսպես ասած, կեղծ մտավորականի «ինստիտուտը»: Նմանները սովորաբար «ամեն ինչ գիտեն», «երբեք չեն սխալվում», չեն ընդունում որեւէ մեկի կարծիքը, չեն հանդուրժում որեւէ մեկին եւ այլն: Այ, սրանցից անհրաժեշտ է վախենալ, զգուշանալ, օր առաջ մերժել, քանի որ մեր հասարակության մի ստվար, դյուրահավատ հատվածն անմիջապես նրա զոհն է դառնում:

Պետք է շեշտել, որ այդպիսի մտավորական կոչվածներով այսօր լցված են եւ՛ իշխանության, եւ՛ ընդդիմության շարքերը, պետական, կուսակցական, հասարակական կառույցները: Ինչեր ասես, որ այդ մարդիկ չգիտեն, ինչերի ասես, որ չեն կարող հասնել, իրագործել, բայց, իհարկե, միայն օդում...

Իրական մտավորականը մտահոգ է իր երկրի ներկայով ու ապագայով, անհանգստացած է նաեւ աշխարհի վաղվա օրով: Այն իշխանությունը, որը մտավորականությանն իրեն թշնամի համարեց, նա հաստատ ձախողված է: Սա պետք է լավ հիշել:

Եվ, այդուհանդերձ, ու՞ր են մեր ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ: //

Խոսք հիշատակի

Մահացել է թարգմանիչ, լրագրող, հրապարակախոս Նելսոն Ալեքսանյանը

Մահացել է լրագրող, թարգմանիչ Նելսոն Ալեքսանյանը: Լուսավոր ու պայծառ մարդ, ով բարությամբ էր լցնում շուրջբոլորը:

Ծնվել է 1952թ. հունվարի 1-ին, Էջմիածին քաղաքում: Սովորել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի եւ գրականության բաժնում: 1979թ. ավարտել է ԽՍՀՄ Մ.Գորկու անվան գրականության ինստիտուտի (Մոսկվա) թարգմանչական բաժինը:

Աշխատել է ՀԳՄ «Լիտերատուրնայա Արմենիա» հանդեսում, «Նոյյան տապան» եւ «Արմենպրես» լրատվական գործակալություններում, «Ռեսպուբլիկա Արմենիա» օրաթերթում: 1989թ-ից Հայաստանի գրողների միության անդամ է:

Նրա թարգմանությամբ առանձին գրքերով եւ ժողովածուներով լույս են տեսել հայաստանյան եւ սփյուռքահայ արդի եւ դասական տասնյակ գրողների ստեղծագործություններ ինչպես Հայաստանում եւ Ռուսաստանում, այնպես էլ արտերկրում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Իսրայելում, Լեհաստանում եւ այլուր: Ռուսերենից հայերեն են թարգմանել գիտական եւ իրավաբանական բնույթի դասագրքեր: Հայաստանյան մամուլում հրապարակել են տասնյակ հրապարակախոսական հոդվածներ:

Հեղինակել է շուրջ 50 թարգմանական գիրք, որոնցից են՝ Ռուբեն Հովսեփյանի «Ամենատաք երկիրը» (1983թ.), «Ապրիլ» (1985թ.), Կարեն Սիմոնյանի «Միքայել Նալբանդյան» (1984թ.), Ռազմիկ Դավոյանի «Եթե աստված կամենա» (2009թ.), Հովհաննես Թումանյանի «Հեքիաթներ» (2012թ.) եւ այլն:

Արժանացել է ՀՀ ՊՆ մրցանակի:

Հ.Գ. Նելսոն Ալեքսանյանն արմատներով Կապան աշխարհից է, հայրը՝ Ճակատեն, մայրը՝ այժմ դատարկված Կեմանց գյուղից: Զինվորական հոր ծառայության բերումով ապրել են տարբեր բնակավայրերում:

«Սյունյաց երկիրը» եւս վշտացած է ճանաչված թարգմանչի անժամանակ մահվան կապակցությամբ եւ ցավակցում է հանգուցյալի հարազատներին ու մտերիմներին:

//

Կյանքից հեռացել է Արծվանիկ գյուղի տարեգիրը

Վախճանվել է վաստակաշատ մանկավարժ, հայրենի եզերքին նվիրված երկու գրքի հեղինակ, Արծվանիկ համայնքի հայրենագիտական թանգարանի հիմնադիր Էդուարդ Մանուչարյանը:

Գիտակցական ողջ կյանքը բնօրրանում՝ Արծվանիկում է անցկացրել: Քաղաքային թոհուբոհից հեռու տասնամյակներ ի վեր զբաղվել է հարազատ գյուղի դեռահասների կրթության ու դաստիարակության գործով:

Ծննդավայրում միջնակարգ կրթություն ստանալուց հետո զորակոչվել է խորհրդային բանակ: Դա 1945 թվականին էր: Ծառայել է տարբեր զորամասերում (89-րդ հրաձգային գունդ, Սեւծովյան նավատորմի առափնյա պաշտպանության զորամաս): Հորացրվելուց հետո վերադարձել է ծննդավայր, եւ նրա հետագա գործունեությունը կապված է եղել մի ոլորտի՝ մանկավարժության հետ: Հայրենի գյուղի դպրոցում աշխատել է զինղեկ եւ ֆիզկուլտուրայի ուսուցիչ, հետո բարձրագույն կրթություն ստացել Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում: Բուհն ավարտելուց հետո նշանակվել է Կաղնուտ գյուղի ութամյա դպրոցի տնօրեն, այնուհետեւ՝ երկու տասնամյակից ավելի հայրենի գյուղի դպրոցի ուսմասվար: 1982-88 թթ. ղեկավարել է հայրենի գյուղի կրթօջախը, կենսաթոշակի անցնելուց հետո շարունակել է դասավանդել որպես պատմության ուսուցիչ՝ մինչեւ 1995 թ.:

Էդուարդ Մանուչարյանը հոգին ավանդեց հունիսի 22-ին՝ Մեծ հայրենականի սկսվելու օրը: Նախախնամության մատը խառն է, թե՝ ոչ, դժվար է ասել, բայց անմեկնելի խորհուրդ կա այն բանում, որ իր կյանքի նպատակներից մեկը համարեց հայրենի գյուղի՝ Երկրորդ աշխարհամարտի մասնակիցների մասին նյութեր, փաստաթղթեր, լուսանկարներ հավաքելը, որոնք ամփոփվեցին մի գրքի մեջ՝ «Հերոսացած արծվանիկցիներ» խորագրով: Ի դեպ, գրքի երկրորդ մասը նվիրված է արծվանիկցիների՝ Արցախյան գոյամարտի մասնակցությանը: Դյուրին չէր նման գործ ձեռնարկելը, մանավանդ որ երկրորդ աշխարհամարտի արծվանիկցի մասնակիցներն արդեն հրաժեշտ էին տվել երկրային կյանքին: Բայց Մանուչարյանն իր հոգու պարտքը համարեց սկսած գործն ավարտին հասցնել՝ հարգանքի տուրք մատուցելով Մեծ հայրենականում եւ Արցախյան գոյամարտում ընկածների հիշատակին եւ գիրքն անվճար բաժանել համագյուղացիներին, ցանկացողներին, նախեւառաջ՝ զոհված զինվորների ընտանիքներին:

Մինչ այդ նրա հեղինակությամբ լույս էր տեսել «Արծվանիկ (ճանաչիր քո գյուղը, նրա մարդկանց)» գիրքը, որում արտացոլված է իր ծննդավայրի պատմությունը՝ վաղնջական ժամանակներից մինչեւ մեր օրերը, ընդարձակ անդրադարձ կա նշանավոր արծվանիկցիների գործունեությանը, ներկայացված են գյուղի երեւելի գերդաստանների տոհմածառերը: Միշտ այն համոզումն է ունեցել, որ յուրաքանչյուր արծվանիկցի պետք է ճանաչի իր ծննդավայրը, իմանա նրա հարուստ պատմությունը, ապա շարունակի լրացնել տոհմածառը՝ ի պահ տալով գալիք սերնդին:

Տակավին 1960 թվականից ի վեր նա ժողովել է հնագիտական արժեք ներկայացնող ցուցանմուշներ, կենցաղային իրեր, աշխատանքային գործիքներ եւ հիմնադրել թանգարան՝ դրանք փրկելով անդառնալի կորստից: Ավելորդ է ասել, որ իր հեղինակած գործերով եւ հիմնադրած թանգարանով Էդուարդ Մանուչարյանը Արծվանիկին վերադարձրեց նրա պատմական հիշողությունը: Առանց վերապահումի կարելի է ասել, որ նրա հեղինակած գրքերը սկզբնաղբյուր կարող են ծառայել հետագա սերնդի ուսումնասիրողների համար:

Էդուարդ Մանուչարյանի կորուստն անչափելի է նրանով, որ առկախ է մնում հարցը, թե նրանից հետո կգտնվի՞ մեկը, որ նույն ջանասիրությամբ կշարունակի շարադրել Արծվանիկ գյուղի տարեգրությունը…

Մանկավարժ տիկնոջ՝ Ամալյա Մովսիսյանի հետ բարեպաշտ օջախ էին ստեղծել, ունեցել հինգ զավակ, որդիները՝ Արարատն ու Աշոտը, մերօրյա պատերազմի ակտիվ մասնակիցներ, Արարատը՝ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի ասպետ:

Խաղաղություն հոգուդ՝ պատվական մարդ, ընտանիքի օրինակելի հայր, վաստակաշատ մանկավարժ, հայրենի գյուղի տարեգիր Էդուարդ Մանուչարյան:

Ձեր մարդ տեսակի լավագույն հատկանիշներն անմար կմնան քո բյուրավոր աշակերտների, բոլոր ճանաչողների գործերում եւ հուշերում եւ ձեռնարկումներում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Կապանը դառնում է հետաքրքիր էքստրիմի սիրահարների համար. քաղաքը կունենա ամենաերկար զիփլայնը

Հայաստանում, համավարակով պայմանավորված, զբոսաշրջության ոլորտում բազմաթիվ ծրագրեր հետաձգվեցին, որոշները չեղարկվեցին: Չնայած դժվարություններին, Սյունիքի մարզի Կապան քաղաքում, հետաքրքիր նախաձեռնություններ են կյանքի կոչվում: Մասնավորապես, աշխատանքներ են իրականացվում, որպեսզի Կապանը դառնա հետաքրքիր էքստրիմի սիրահարների համար: Մոտ ժամանակներս ավարտին կհասցվեն Կապանում զբոսաշրջային ոլորտում 2020 թվականին խոշոր ծրագրերից մեկի աշխատանքները: Մասնավոր հատվածի ներդրումների արդյունքում Կապանը կունենա աննախադեպ երկարությամբ զիփլայն: Այն երկար է Ենոքավանի (750 մ) եւ Երեւանի (մոտ 870 մ) զիփլայններից:

«Արմենպրես»-ի հետ զրույցում նախագծի ինժեներ Գեղամ Միրոյանը նշեց, որ մի քանի օրից կկատարվեն վերջնական փորձարկումները:

«Այս զիփլայնի մեկ կետից մինչեւ մյուս կետը ուղիղ գծով 1080 մետր է: Գետնից ճոպանի ամենաբարձր կետը գերազանցում է 160 մետրը: Այն անցնում է քաղաքի վրայով: Այսինքն՝ զբոսաշրջիկն անցնելու է շենքերի վրայով: Հիմնականում զիփլայնները բնության գրկում են լինում, սա քաղաքի մեջ է, քաղաքի վրայով է անցնում: Այս զիփլայնը դրանով նույնպես աննախադեպ է», – ասաց Գեղամ Միրոյանը:

Զիփլայնի կառուցման աշխատանքները մեկնարկել են անցած տարվա սեպտեմբերի վերջին: Թղթաբանությունից մինչեւ վերջնական արդյունք՝ ամիսներ շարունակ հետեւողական աշխատանքի շնորհիվ այն արդեն պատրաստ է: Գեղամ Միրոյանը նշեց, որ հիմա վերջնական փուլում են:

«Անվտանգության առումով կարող եմ ասել, որ խնդիր չկա: Աշխատանքները կատարվել են ամենաբարձր մակարդակով: Այցելուների հետ տեղում աշխատանք կկատարվի, կլինի հրահանգավորում: Ինչ վերաբերում է գնային քաղաքականությանը, ապա այն քննարկման փուլում է», – ասաց Գեղամ Միրոյանը:

Կապան համայնքի ղեկավար Գեւորգ Փարսյանը շատ կարեւոր համարեց նման ծրագրի իրականացումը: Այն Կապանում զբոսաշրջության ոլորտում այս տարվա առաջին խոշոր ծրագիրն է:

«Աշխատանքները գրեթե ավարտական փուլում են: Այն շատ գրավիչ կլինի էքստրիմը սիրող զբոսաշրջիկների համար: Այս նախաձեռնությունը մեծ նշանակություն կունենա Կապանի համար. վստահաբար մեր համայնքը զբոսաշրջիկներին այլ կողմից կներկայանա, այցելուների նոր հոսք կապահովվի: Ցավոք, համավարակով պայմանավորված, ծրագրերը փոխվեցին, սակայն չենք հուսահատվում, մենք եւ մասնավոր հատվածը շարունակում ենք աշխատել ու պատրաստվել», – ասաց Կապան համայնքի ղեկավարը:

Նա տեղեկացրեց, որ Կապանում եւս մեկ զիփլայն է լինելու, այս անգամ բնության գրկում՝ անտառային հատվածում: Այս ուղղությամբ եւս գործընթացներն առաջ են գնում, օրերս ավագանու օրակարգում այդ նպատակով հողատարածքի օտարման հարցն էր ներառված:

«Զբոսաշրջության զարգացման տեսանկյունից մեծ հույսեր ունենք՝ կապված օդանավակայանի վերաբացման հետ: Դրանից բացի, ինչպես գիտեք, հիմնանորոգվում է Տաթեւ-Կապան ավտոճանապարհը: Այս տարի պետական միջոցներով հիմնանորոգվում է դրա 12.5 կմ հատվածը, հաջորդ տարի՝ 17.5 կմ-ը: Սա նույնպես կարեւոր ենթակառուցվածք է եւ զարկ կտա տուրիզմի զարգացմանը», – ասաց համայնքի ղեկավարը:

Գեւորգ Փարսյանը նշեց, որ քաղաքի բարեկարգման, համայնքին նոր տեսք տալու ուղղությամբ աշխատանքները չեն կանգնում: Իրենք ամեն ինչ անում են, որ քաղաքն ավելի գրավիչ դառնա հյուրերի համար: Նախատեսվում է այգիների վերանորոգում, հանգստյան նոր միջավայրի ստեղծում: Կապանում սպասում են երկրում համաճարակային իրավիճակի բարելավմանը, որպեսզի հետաձգված ծրագրերը նույնպես սկսեն կյանքի կոչել:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Հայտարարություն

«Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ում պահանջվում են բարձրագույն կրթությամբ հետեւյալ առարկաների դասավանդման մասնագետներ՝

1. Հայոց լեզու եւ հայ գրականություն
2. Քիմիա
3. Կենսաբանություն
4. Աշխարհագրություն
5. Պատմություն
6. «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության վարպետ
7. «Խոհարարական գործ» մասնագիտության վարպետ

Տեղեկությունների համար զանգահարել 077-52-32-90 հեռախոսահամարով կամ այցելել «Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ, հասցե՝ ք. Քաջարան, Խանջյան 5:

Սյունյաց Երկիր
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի:
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց Երկրին» պարտադիր է: Ⓡ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 07.07.2020թ.: